# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Գերագույն հոգեւոր խորհրդի նիստ, 19 մարտի 2010 թ.)

Գերաշնո՛րհ Սրբազան Հայրեր եւ մեծարգո՛ Տիարք,

Սույն զեկույցով ներկայացնում ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2009 թ. գործունեությունը՝ անդրադառնալով Մայր Աթոռում պաշտոնական ընդունելություններին, Հայրապետական այցելություններին, Սուրբ Էջմիածնի կողմից ներեկեղեցական եւ միջեկեղեցական ասպարեզում իրագործված ձեռնարկներին, Մայր Աթոռի միաբանությանն առնչվող հարցերին, Մայր Աթոռի տարբեր բաժինների կողմից իրականացված աշխատանքներին ու Եկեղեցի-պետություն հարաբերություններին:

## Ա. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարվա ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել Հայաստան ժամանած պաշտոնական պատվիրակություններ, բազմաթիվ ուխտավորներ Հայաստանից, Սփյուռքից եւ արտերկրից, ինչպես նաեւ հասարակական, ազգային, մշակութային գործիչներ:

Փետրվարի 24-ին ընդունեցինք պաշտոնական այցով Հայաստան ժամանած Վրաստանի Խորհրդարանի նախագահ Դավիթ Բաքրաձեի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար փիար Գեղամ Ղարիբջանյանի եւ երկու երկրների դեսպանների: Հանդիպման ընթացքում Մեր կողմից բարձրացվեցին Վրաստանում կրոնական կազմակերպությունների գրանցման օրենքի բացակայության եւ եկեղեցիների վերադարձման հարցերը: Վրաց Ազգային Ժողովի նախագահն առաջին հարցի առնչությամբ հայտնեց, որ դա միտումնավոր Հայ Եկեղեցու դեմ կատարված քայլ չէ, իսկ երկրորդ հարցի առնչությամբ հայտնեց, որ այն պետք է քննարկվի Վրաց Եկեղեցու հետ: Մենք հավելեցինք, որ Վրաց Եկեղեցու հետ խնդրի քննարկումը հեռանկար չունի, եւ ճանապարհը, որ տեսնում է Հայ Եկեղեցին, Վրաց իշխանության աջակցությամբ օրենքի սահմաններում հարցի կարգավորումն է: Մեր խոսքում նաեւ անդրադարձանք Ջավախքի խնդիրներին եւ հավարտ հանդիպման հույս հայտնեցինք, որ Աստծու օգնականությամբ վրաց եւ հայ ժողովուրդները, որ կրում են դարավոր եղբայրության ոգու կնիքը, ի վերջո կհաղթահարեն առկա տարաձայնությունները:

Մարտի 24-ին Մայր Աթոռում հյուրընկալեցինք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ փիար Պերճ Սեդրակյանին: Հանդիպման ընթացքում անդրադարձանք Հայ Առաքելական Եկեղեցու սերտ համագործակցությանը, քննարկեցինք համատեղ իրականացվող կրթական եւ սոցիալական ծրագրերի ընթացքը:

Ապրիլի 15-ին ընդունեցինք Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ-պետությունների Ներքին գործերի նախարարներին՝ գլխավորությամբ կազմակերպության գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժայի եւ ՀՀ ոստիկանապետ Ալիկ Սարգսյանի:

Ապրիլի 23-ին ընդունեցինք «Հայկական ճարտարապետությունը եւ ԻԱ դարը» ճարտարապետների համահայկական համաժողովի շուրջ 80 մասնակիցների՝ առաջնորդությամբ ՀՀ սփյուռքի նախարար տիկին Հրանուշ Հակոբյանի:

Մայիսի 3-ին Վեհարանում հանդիպեցինք Եւրոպայի 19 երկրներից ժամանած երիտասարդ քաղաքական գործիչների հավաքի մասնակիցներին:

Մայիսի 5-ին Մայր Աթոռում հյուրընկալեցինք Ռուսաստանի Դաշնության առաջին տիկին Սվետլանա Մեդվեդեւային՝ Հայաստանի Հանրապետության առաջին տիկին Ռիտա Սարգսյանի ուղեկցությամբ:

Մայիսի 23-ին հանդիպեցինք Խորվաթիայի Հանրապետության Նախագահ Ստեփան Մեսիչին:

Մայիսի 29-ին Մայր Աթոռում ընդունեցինք Սլովակիայի Հանրապետության Տրնավայի մարզի նախագահ Տիբոր Միկուշին՝ ուղեկցությամբ Արմավիրի մարզպետի:

Հունիսի 10-ին ընդունեցինք դիվանագիտական առաքելությունն ավարտող Հայաստանում Հնդկաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռինա Փանդեին:

Հունիսի 18-ին Վեհարանում հյուրընկալեցինք պաշտոնական այցով Հայաստան ժամանած Սիրիայի Արաբական Հանրապետության Նախագահ Բաշար Ալ-Ասադին՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդյանի: Հանդիպման ընթացքում հրավեր ստացանք պաշտոնական այց կատարելու Սիրիայի Հանրապետություն:

Հուլիսի 6-ին ընդունեցինք պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Կիպրոսի Հանրապետության Նախագահ Դիմիտրիս Խրիստոֆիասին՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանի:

Հուլիսի 8-ին Մայր Աթոռում հանդիպեցինք ուխտավորաբար Հայաստանում գտնվող Իտալիայի Պավիա քաղաքի արքեպիսկոպոսարանի ճեմարանի սաներին՝ Պավիայի արքեպիսկոպոս Ջովաննի Ջուդիչի գլխավորությամբ:

Հուլիսի 29-ին Մեր հյուրն էր պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Սերբիայի Հանրապետության Նախագահ Բորիս Տադիչը՝ ուղեկցությամբ ՀՀ արտգործնախարար տիար Էդուարդ Նալբանդյանի:

Սեպտեմբերի 18-ին ընդունեցինք ՌԴ նորանշանակ դեսպան Վյաչեսլավ Կովալենկոյին:

Սեպտեմբերի 19-ին՝ պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Սինգապուրի ավագ նախարար Լի Կուան Յուին:

Սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռում հանդիպեցինք Ֆրանսիայի Առնուվիլ լե Կոնեսի քաղաքապետ Միշել Օմասին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ քաղաքի Սուրբ Վարագա Խաչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Հարություն քհն. Տաշճյանի եւ ծխականների:

Հոկտեմբերի 1-ին Վեհարանում ընդունեցինք Բելգիայի Թագավորության Սենատի նախագահ Արման դը Դեկերի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային Ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արա Բաբլոյանի:

Հոկտեմբերի 3-ին հյուրընկալեցինք «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմ-

բումի» անդամներին, ովքեր Մեր հրավերով Լիբանանից ժամանեցին Հայաստան՝ Համախմբումի հիմնադրության 50-ամյակը տոնախմբելու համար:

Հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռում հանդիպեցինք Երևանի պետական համալսարանի 90-ամյակի միջոցառումների և «Համալսարանական կրթությունը ԻԱ դարում» միջազգային գիտաժողովի առիթով Հայաստան ժամանած տարբեր երկրների համալսարանների պատվիրակությունների ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի և աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպս. Ժամկոչյանի:

Նույն օրը հյուրընկալեցինք «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին, ովքեր Հայաստան էին ժամանել հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի 15-ամյակի առիթով:

Այնուհետև ընդունեցինք Ֆրանսիայի Պրովանս-Ալպ-Կոտ դ'Ազյուրի նահանգապետ Միշել Վոզելի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի միաբան Տ. Զատիկ վրդ. Ավետիքյանի:

Հոկտեմբերի 8-ին Սուրբ Էջմիածնում հանդիպում ունեցանք ԱՊՀ և Բալթյան երկրների թարգմանիչների ու հրատարակիչների երրորդ համաժողովի առիթով Հայաստան ժամանած Ռուսաստանի գրողների միության Մոսկվայի կազմակերպության վարչության քարտուղարներ Մաքսիմ Զամշևի և Ալբերտ Օհանյանի հետ: Հանդիպման ընթացքում հյուրերը Հայոց Հայրապետին հանձնեցին միության Ալեքսանդր Գրիբոեդովի անվան հուշամեդալը:

Հոկտեմբերի 11-ին ընդունեցինք պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր տնօրենների պատվիրակությանը, որին ուղեկցում էին ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը և ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վաչե Գաբրիելյանը:

Հոկտեմբերի 12-ին Մայր Աթոռում հյուրընկալեցինք հոկտեմբերի 12-15-ը Երևանում կայացած Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եվրոպական տարածաշրջանային գործընկերների խմբի ժողովի մասնակիցներին: Խումբը կազմված է Արևմտյան Եվրոպայի Էկումենիկ գործակալություններից և Արևելյան Եվրոպայի Կրոր սեղաններից:

Դեկտեմբերի 11-ին Մեր հյուրն էր պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Լատվիայի Հանրապետության Նախագահ Վալդիս Զաթլերսին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդյանի:

## Բ. ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

### ա) ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ

Հուլիսի 14-ին մեկօրյա պաշտոնական այցով մեկնեցինք Մոսկվա, ուր հանդիպում ունեցանք Ռուս Ուղղափառ Եկեղեցու նորընտիր գահակալ՝ Մոսկվայի և Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի հետ:

Մեզ ուղեկցող շքախմբում ընդգրկված էին Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորա-

կաններ. Երուսաղեմի Հայոց Պատրիարքության պատրիարքական փոխանորդ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանը, Կ. Պոլսի Հայոց Պատրիարքության Կրոնական ժողովի ատենապետ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանը, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Ռուբեն Վարդանյանը, փիար Գագիկ Ղազինյանը եւ Տ. Հովնան աբեղա Հակոբյանը՝ իբրեւ գավազանակիր: Այցի ընթացքում Հայ Եկեղեցու անունից շնորհավորանքներ ուղղեցինք եւ Մեր բարեմաղթանքները փոխանցեցինք Ռուս Ուղղափառ Եկեղեցու նորընտիր գահակալին:

Պատրիարքի հետ հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում, կառուցողական քննարկումներով, որոնց ընթացքում անդրադարձանք նաեւ Վրաստանում հայկական եկեղեցիների բռնագրավման խնդրին:

Ամենայն Հայոց Հայրապետի եւ Համայն Ռուսիո Պատրիարքի փոխհամաձայնությամբ շարունակվելու է աստվածաբանական երկխոսությունը Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջեւ, ինչպես նաեւ Կիրիլ Ա Պատրիարքի միջնորդությամբ շարունակվելու են մոսկովյան եռակողմ հանդիպումները՝ Հայ Առաքելական, Ռուս Ուղղափառ Եկեղեցիների եւ Կովկասի մահմեդականների առաջնորդի միջեւ՝ ի խնդիր ԼՂ հակամարտության հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի:

## բ)ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Մայիսի 7-ին ուղեկցությամբ բարձրաստիճան հոգեւորականների եւ Մայր Աթոռի միաբանների, այցելեցինք Երեւանի Խ. Աբովյանի անվան Պետական մանկավարժական համալսարան, ուր հանդիպում ունեցանք դասախոսական կազմի եւ ուսանողության հետ:

Հանդիպման ընթացքում փոխանցեցինք Հայրապետական Մեր օրհնությունը ներկաներին եւ անդրադարձանք մանկավարժի մասնագիտության կարեւորությանը, որին կոչվածները եկող սերունդներին ազգային ոգով, առ Հայրենին եւ Եկեղեցին սիրով կրթելու եւ դաստիարակելու բարձր պատասխանատվություն եւ առաքելություն են ստանձնում: Կարեւորեցինք նաեւ երիտասարդության՝ եկեղեցական կյանքում ներգրավվածությունը եւ նրանց կողմից եկեղեցականներին իրենց առաքելության մեջ ցուցաբերվող աջակցությունը: Հանդիպման ավարտին համալսարանի գրադարանին նվիրեցինք վերջին շրջանում Մայր Աթոռի կողմից տպագրված գրականություն:

## գ) ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑ ԱՐՑԱԽ՝ ԹԵՄԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Սեպտեմբերի 26-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Արցախի թեմի վերաբացման 20-ամյակին նվիրված միջոցառումները նախագահելու հրավերով բարձրաստիճան հոգեւորականների ուղեկցությամբ հովվապետական այց կատարեցինք Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում կատարեցինք Անդաստան եւ խաչքարի օծում՝ ի նշան Արցախի թեմի վերաբացման 20-ամյակի:

Հաջորդ օրը Շուշիի Ս. Ամենափրկիչ եկեղեցում մատուցեցինք Սուրբ եւ Անմահ Պատարագ, որի ավարտին կատարեցինք Հանրապետական մաղթանք՝ ի խնդիր Արցախի պետականության անսասանության եւ զորացման: Նույն օրը մասնակցեցինք Արցախի պատմա-երկրագիտական թանգարանում «Եկեղեցական գանձեր» ցուցահանդեսի բացմանը:

Սեպտեմբերի 28-ին այցելեցինք ԼՂՀ Նախագահ տիար Բակո Սահակյանին: Հանդիպման ընթացքում ԼՂՀ Նախագահն իր գոհունակությունն ու ուրախությունը հայտնեց Մեզ հովվապետական այցի առիթով եւ մանրամասն ու ամբողջական տեղեկություններ ներկայացրեց ԼՂՀ-ում տիրող կացության առնչությամբ:

Հանդիպման ավարտին Հայրապետական Մեր գնահատանքը բերեցինք ԼՂՀ Նախագահին՝ ջերմ ու սիրալիր ընդունելության համար, ինչպես նաեւ անդրադարձանք արցախյան ազատագրական պայքարում Եկեղեցու ունեցած մասնակցությանը եւ ընդգծեցինք Եկեղեցու դերն արցախահայության այսօրվա կյանքում:

Հովվապետական Մեր այցի ընթացքում մասնակցեցինք նաեւ Արցախի թեմին նվիրված լուսանկարների եւ թեմի կողմից հրատարակված գրականության ցուցահանդեսին: Միջոցառումները եզրափակվեցին գեղարվեստական երեկոյթով, որի ընթացքում մեկ անգամ եւս շնորհավորեցինք արցախահայությանը՝ բարձր գնահատելով թեմի առաջնորդի եւ եկեղեցականների մատուցած ծառայությունը: Հորդորեցինք նույն գիտակցությամբ շարունակել աստվածահաճո առաքելությունը՝ ի բարօրություն Արցախում բնակվող մեր զավակների եւ ի շինություն Հայ Եկեղեցու: Արցախահայությանը պատգամեցինք նաեւ հավատքով եւ աստվածսիրությամբ շարունակել իրենց հավատավոր քաջարի ընթացքը:

Սեպտեմբերի 29-ին, հաջողությամբ ավարտելով Արցախի թեմի վերաբացման 20-ամյակին նվիրված միջոցառումների շարքը, գոհունակ սրտով վերադարձանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

## դ)ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 12-ին Սիրիայի Արաբական Հանրապետության Նախագահ Բաշար Ալ-Ասադի եւ հայ համայնքի հրավերով եռօրյա պաշտոնական եւ հովվապետական այցով մեկնեցինք Սիրիայի Արաբական Հանրապետություն: Մեզ ուղեկցող շքախմբում էին Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը, գավազանակիր Տ. Հովնան աբեղա Հակոբյանը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Պերճ Սեդրակյանը եւ փիար Լեւոն Սարգսյանը: Այցի ընթացքին հանդիպում ունեցանք Սիրիայի Արաբական Հանրապետության Նախագահ Բաշար Ալ-Ասադի, ՍԱՀ գլխավոր մուֆտի Ահմադ-Բադր-Ալ-դին-Հասունի հետ: Հանդիպումների ընթացքում Մեր գնահատանքը հայտնեցինք Սիրիայի Արաբական Հանրապետության ղեկավար մարմիններին՝ Սիրիայում բնակվող հայ համայնքի նկատմամբ ցուցաբերած եղբայրական ջերմ ու բարյացակամ վերաբերմունքի համար:

Հանդիպումներ ունեցանք նաեւ ՍԱՀ վարչապետի, Ազգային Ժողովի նախագահի, կրոնից նախարարի հետ: Հայրապետական այցելություններ կատարեցինք ազգային տարբեր կրթական հաստատություններ, հանդիպեցինք հայ համայնքի ներկայացուցիչներին: Մատուցեցինք Հայրապետական Ս. Պատարագ, որի ընթացքում փոխանցեցինք Հայրապետական Մեր պատգամը Սիրիայում բնակվող հայորդիներին:

Հովվապետական Մեր այցի ընթացքին հանդիպումներ ունեցանք նաեւ Ասորի Ուղղափառ Եկեղեցու պատրիարք Զաքքա Ա Իվասի, Անտիոքի Հույն պատրիարք Իգնատիոս Դ Հազիմի, Ասորի Կաթոլիկ Եկեղեցու պատրիարք Գրիգորիոս Գ Լահամի հետ:

## Ե)ԵՌՕՐՅԱ ԱՅՑ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

Նոյեմբերի 24-ին միջեկեղեցական եւ հովվապետական եռօրյա այցով մեկնեցինք Մոսկվա, ուր կատարեցինք Մոսկվայի առաջնորդանիստ եկեղեցական համալիրի տարածքում կառուցված փոքր եկեղեցու գմբեթի խաչի օծումը:

Այցի ընթացքում հանդիպեցինք նաեւ Համայն Ռուսիո եւ Մոսկվայի Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքին:

## Գ. ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններն իրենց հոգեւոր ծառայությունն են մատուցում Առաքելական Սուրբ Եկեղեցու հայաստանյան եւ սփյուռքի թեմերում, իսկ Սուրբ Էջմիածնում բնակվող միաբաններն իրենց աշխատանքն են իրականացնում Մայր Աթոռի տարբեր բաժիններում, դասավանդում Գեւորգյան հոգեւոր ճեմարանում եւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում, Մայր Տաճարում մասնակցում առավոտյան եւ երեկոյան ժամերգություններին, կիրակի օրը՝ Սուրբ Պատարագի արարողությանը:

Մայր Աթոռի միաբանության անդամների թիվը 99 է, որոնցից շուրջ 30-ը բնակվում են Սուրբ Էջմիածնում:

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության շարքերում սպասավորում են նաեւ շուրջ 140 սարկավագներ, ովքեր ծառայում են Մայր Աթոռի տարբեր կառույցներում եւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերում:

Անցյալ տարի պարբերաբար գումարվել են միաբանական, սարկավագական ժողովներ, քննարկվել են միաբանության հոգևոր կյանքը խթանող հարցեր, միաբանության առօրյային վերաբերող խնդիրներ, ընդունվել համապատասխան որոշումներ:

## ա) ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2009 թ. սարկավագական և քահանայական քննությունները հաջող հանձնած թեկնածուները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում արժանացան ձեռնադրության և օծման: Տարվա ընթացքում քահանայական ձեռնադրություն և օծում ստացան 48 սարկավագներ, որոնցից 17-ը կոչվեցին ոչ ամուսնացյալ քահանայության և համալրեցին միաբանության շարքերը:

Հունվարի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունից Մայր Աթոռ ժամանած Գերաշնորհ Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյանի ձեռամբ հինգ նորընծա սարկավագներ ստացան քահանայական ձեռնադրություն և օծում: Նույն օրը՝ երեկոյան ժամերգությունից առաջ, տեղի ունեցավ հինգ աբեղաների վեղարի փվչության կարգը:

Ապրիլի 5-ին՝ Ծաղկազարդի տոնին, ձեռամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արապատ եպիսկոպոս Գալթագճյանի, կատարվեց Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանի վեղարի փվչությունը: 2002 թ. օգոստոսի 7-ին Հայրապետական Մեր փնօրհնությամբ Տ. Խորեն արդ. Հովհաննիսյանը կարգալույծ էր հռչակվել՝ հոգևոր ծառայությունն ինքնակամ լքելու համար: Նկատի ունենալով Նշան (Տ. Խորեն աբեղա) Հովհաննիսյանի Մեզ ներկայացրած զղջումի գիրը՝ ընդառաջել էինք նրա խնդրանքին և սահմանել մեկամյա ապաշխարության շրջան Ս. Գեղարդավանքում, որի բոլորումից հետո արտոնեցինք նրա վերականգնումը կուսակրոն քահանայության կարգի մեջ:

Հուլիսի 19-ին՝ Պայծառակերպության տոնին, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, ձեռամբ ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի, քահանայական ձեռնադրություն և օծում ստացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 27 միաբան սարկավագներ: Հայոց Եկեղեցու այս կարևոր իրադարձությանը մասնակցեցին հոգևոր և պետական այրեր, ինչպես նաև ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Նույն օրը՝ երեկոյան ժամերգության ժամանակ, կատարվեց նաև նորընծա 9 ավեղաների վեղարի փվչության արարողությունը: Տ. Սարգիս, Տ. Անդրանիկ, Տ. Ներսես, Տ. Եղիա, Տ. Վաչե, Տ. Գարեգին, Տ. Հակոբ, Տ. Նշան և Տ. Պողոս կուսակրոն քահանաները վեղար ստացան՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

Դեկտեմբերի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ստեփաննոս Նախավկա սարկավագի տոնի օրը, Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը կատարեց 18 ճեմարանականների սարկավագական ձեռնադրություն:

Դեկտեմբերի 13-ին, ձեռամբ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի, քահանայական ձեռնադրություն և օծում ստացան 12 միաբան սարկավագներ: Նույն օրը՝ երեկոյան ժամերգության ժամանակ, Տ. Հակոբ, Տ. Անանիա, Տ. Հմայակ քահանաները վեղար ստացան՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

## բ) ԿԱՐԳԱԼՈՒԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐ

2009 թ. Հայրապետական Մեր փնօրհնությամբ Ուկրաինայի հայոց թեմի եւ Արմավիրի թեմի հոգեւոր սպասավորներ Տ. Վարդան քհն. Վարդանյանը եւ Տ. Մխիթար քհն. Սարիբեկյանը քահանայական կոչմանն անհարիր ընթացքի պատճառով հոչակվեցին կարգալույծ, որի համար հիմք ծառայեցին Ուկրաինայի հայոց եւ Արմավիրի թեմերի առաջնորդներ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արք. Բունիաթյանի եւ Գերաշնորհ Տ. Սիոն եպս. Ադամյանի ներկայացրած միջնորդագրերը:

## գ)ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ

2009 թ. Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը կորցրեցին Մայր Աթոռի երիցագույն միաբաններից Առաքելական Եկեղեցու նվիրյալ եւ բազմավաստակ սպասավոր Գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանին:

Սրբազան Հայրը փետրվարի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական իր կացարանում Տ. Հուսիկ արք. Սանթուրյանի սանիկի կողմից վստահության չարաշահման ճանապարհով ենթարկվել էր ավազակային հարձակման, ինչի հետեւանքով ստացել էր գանգոսկրի կոտրվածք: Սրբազան Հայրն անգիտակից վիճակում տեղափոխվել էր հիվանդանոց:

Միջադեպից մինչ իր վախճանը Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը եղել է Երեւանի «Նաիրի» բժշկական կենտրոնում՝ բժիշկների հոգատար խնամքի ներքո: Սրբազան Հայրը կյանքից հեռացավ հունիս 27-ին՝ կյանքի 72-րդ տարում:

Հունիսի 29-ին Սուրբ Գայանե վանքում տեղի ունեցավ Ներսես Սրբազանի հոգեհանգստյան արարողությունը, որին ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, պաշտոնական այրեր, թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, տարբեր թեմերից ժամանած եկեղեցականներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Հայաստանում պապական նվիրակ արքեպիսկոպոս Կլաուդիո Գուջերոտին, հանգուցյալ Սրբազանի հարազատներ եւ բարեկամներ:

Հունիսի 30-ին Մեր նախագահությամբ Թեղենիքի Սրբոց Նահատակաց եկեղեցում տեղի ունեցավ Ներսես Սրբազանի հուղարկավորության արարողությունը, որին մասնակցում էին Հայ Առաքելական Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ եւ տարբեր թեմերի հոգեւոր սպասավորներ, հավատացյալներ, ինչպես նաեւ Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանը եւ մարզային իշխանությունների ներկայացուցիչներ:

Մայր Աթոռի Լուսարարապետ Գերաշնորհ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի ձեռամբ մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում կատարեցինք Սրբազան Հոր Վերջին օծման կարգը:

Շարականների եւ սաղմոսների երգեցողության ներքո Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի աճյունն ամփոփվեց Սրբոց Նահատակաց եկեղեցու բակում:

## . ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ

2009 թ. ընթացքում եկեղեցանվիրումի եւ բարի վաստակի համար Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակներ Մեր կողմից պարգեւատրվել են պատվո շքանշաններով եւ Օրհնության գրերով (8 «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», 6 «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ», 18 «Սուրբ Ներսես Շնորհալի», 41 Հայրապետական Սրբապատ Կոնդակ, 75 Օրհնության գիր):

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Վեհարանի հարկի ներքո, կատարվել են հետեւյալ պարգեւատրումները:

Մայիսի 3-ին մեր Եկեղեցվո բարձրագույն «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո շքանշան շնորհեցինք տիկին Կարինե Սարգսյանին՝ բարձր գնահատելով ազգային կյանքում նրա ապվածահաճո ընթացքը եւ գործունեությունը: Տիկին Կարինե Սարգսյանի եւ լոնդոնաբնակ բարերար Արմեն Սարգսյանի հովանավորությամբ 2008 թ. Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հարեւանությամբ կառուցվել է Ս. Վարդան եւ Ս. Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանը:

Հունիսի 18-ին պաշտոնական այցով Հայաստան ժամանած Սիրիայի Արաբական Հանրապետության Նախագահ Բաշար Ալ-Ասադին, ի գնահատություն հայ ժողովրդի եւ Հայ Առաքելական Եկեղեցու հանդեպ Սիրիայի Արաբական Հանրապետության Նախագահի, պետության եւ ժողովրդի ազնիվ վերաբերմունքի, ինչպես նաեւ խաղաղության եւ ժողովուրդների բարեկամության համար ներդրած ջանքերի, հանձնեցինք Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո շքանշան:

Հուլիսի 3-ին Վեհարանի դահլիճում տեղի ունեցած մեծարման հանդիսության ընթացքում հայազգի Արշակ Մաղոյանը եւ երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանը հայրենիքին, հայ մշակույթին եւ Հայ Առաքելական Եկեղեցուն բերած ծառայությունների համար պարգեւատրվեցին Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանով:

Հուլիսի 10-ին Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան հանձնեցինք պետական եւ մտավորական գործիչ տիար Շչորս Դավթյանին՝ ի գնահատություն Հայ Եկեղեցուն եւ մասնավորապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին բերած ազնիվ ծառայությունների:

Սեպտեմբերի 23-ին տեր եւ տիկին Բաբկեն եւ Անահիտ Մկրյանները (Ֆիլադելֆիա, ԱՄՆ), հայ ժողովրդին եւ Եկեղեցուն մատուցած օգտաշատ ծառայությունների համար Մեր կողմից պարգեւատրվեցին Հայ Եկեղեցու բարձրագույն «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո շքանշանով:

2009 թ. ընթացքում տվել ենք նաեւ Հայրապետական Սրբապատ Կոնդակներ, որոնցից երկուսը նվիրված են Արցախի թեմի վերաբացման 20-ամյակին եւ Ադանայում կազմակերպված ջարդերի 100-ամյա տարելիցի հիշատակին:

Հայրապետական Սրբապատ Կոնդակով 2009 թ. սկսած Սուրբ Գրիգոր Լուսավորչի Գյուտ Նշխարաց տոնի օրը հռչակեցինք Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու ուխտի օր:

## Ե. ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՕԾՈՒՄ ԵՒ ՀԻՄՆԱՐԿԵՔ

Մայիսի 14-ին Երեւանում կատարեցինք Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի՝ Հին ձեռագրերի ինստիտուտի նոր մասնաշենքի հիմնարկեքի արարողությունը, որին ներկա էին Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը եւ պաշտոնատար այլ անձիք:

Հուլիսի 4-ին ՀՀ Նախագահի տիկին Ռիտա Սարգսյանի, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի եւ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի, Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի, Մայր Աթոռի միաբանների, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների, ազգային բարերար Վահագն Հովնանյանի եւ բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ կատարեցինք Երեւանի Ս. Կաթողիկե եկեղեցուն հարակից Ս. Աննա եկեղեցու եւ Երեւանում Հայրապետական նստավայրի հողօրհնեքի արարողությունը: Եկեղեցին եւ կաթողիկոսական նոր նստավայրը կառուցվում են Հայ Առաքելական Եկեղեցու ազգային բարերարներ տեր եւ տիկին Հրայր եւ Աննա Հովնանյանների մեկենասությամբ եւ ճարտարապետ Հրաչ Պողոսյանի նախագծով:

Հուլիսի 18-ին Մեր ձեռամբ օծվեց Գեղարքունիքի մարզի Արմաղանի Ս. Հարություն մատուռը, որի բարերարն է տաշքենդաբնակ Ռաֆիկ Մխիթարյանը: Այն կառուցվել է Ռաֆիկ Հերգրևյանի նախագծով: Մատրան օծմանը ներկա էին ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը, պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ, մարզային եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

Երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 10-րդ տարելիցի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կազմակերպված մի շարք միջոցառումների եւ արարողությունների շարքին սեպտեմբերի 19-ին կատարեցինք Գարեգին Ա Հայրապետի անվան հոգեւոր-կրթական կենտրոնի հողօրհնեքի արարողությունը: Հոգեւոր-կրթական կենտրոնը կառուցվում է Հայոց Եկեղեցու բարերարներ տեր եւ տիկին Հայկ եւ Էլզա Դ-իդիզյանների ազնիվ նվիրատվությամբ եւ ծառայելու է եկեղեցականների վերապատրաստության, կրոնի ուսուցիչների պատրաստության, գիտաժողովների եւ հոգեւոր-կրթական տարբեր հավաքների համար:

Սեպտեմբերի 22-ին օրհնեցինք ազգային բարերարներ տեր եւ տիկին Վաչե եւ Թամար Մանուկյանների հովանավորությամբ կառուցվող Ս. Էջմիածնի Մատենադարանի հիմքերը, որին ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը եւ տիկար Վաչե Մանուկյանը, ինչպես նաեւ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Մայր Աթոռի միաբաններ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, գիտության եւ մշակույթի գործիչներ: Մատենադարանի նախագծի ճարտարապետն է Արտակ Ղուլյանը, շինարարությունն իրականացնում է «Սպիտակ տուն» ՍՊԸ-ն: Մատենադարան-գիտական կենտրոնն իր ծառայությամբ ու

գործունեությամբ պիտի նպաստի հայոց ազգային-եկեղեցական կյանքի անդաստանում աստվածաբանական եւ հայագիտական մտքի զարգացմանը՝ հավելելով այս ասպարեզներում առկա նվաճումներն ու ձեռքբերումները:

Հոկտեմբերի 11-ին, առընթերակայությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի եւ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի, օրհնեցինք Սեւան քաղաքի նորակառույց եկեղեցու հիմքերը: Արարողությանը ներկա էին մարզային եւ տեղական իշխանությունների ներկայացուցիչներ եւ հարյուրավոր հավատավոր սեւանցիներ: Եկեղեցու բարերարներն են փրանսաբնակ Սարգիս Պետոյանը եւ Ալեն Մանուկյանը: Եկեղեցու ճարտարապետն է Արտակ Ղուլյանը:

Նոյեմբերի 1-ին օծեցինք Մասիս քաղաքի Ս. Գեւորգ եկեղեցին: Եկեղեցին կառուցվել է բարերարությամբ Գագիկ Աղիբեկյանի եւ Արթուր Աբրահամի, ճարտարապետն է Հրաչ Գասպարյանը: Օծման արարողությանը մասնակցում էին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, բարձրաստիճան հոգեւոր այրեր, մարզային ու տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, Մայր Աթոռում անցկացվող Թեմական ներկայացուցչական ժողովի մասնակիցներ եւ հարյուրավոր հավատավոր մասիսցիներ:

## Զ. ԹԵՄԱԿԱՆ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 3-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում անցկացրեցինք Թեմական ներկայացուցչական երրորդ ժողովը, որին մասնակցում էին Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունների ներկայացուցիչներ, Հայաստանի եւ Սփյուռքի հայոց թեմերի առաջնորդներ, վանաբնակ բարձրաստիճան հոգեւորականներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ եւ թեմական աշխարհական ներկայացուցիչներ:

Հոկտեմբերի 30-ին ժողովի թվով 76 մասնակիցներ Մայր Տաճարում ներկա գտնվեցին երեկոյան ժամերգությանը՝ հավաքական աղոթք կատարելով առաջիկա ժողովի բարի ընթացքի համար: Հավարտ արարողության՝ մաղթեցինք ժողովի մասնակիցներին, որ Երկնավոր Տերը իմաստությամբ շնորհազարդի նրանց եւ Իր օրհնությունն ու Սուրբ Հոգու առաջնորդությունը պարգեւի առաջիկա օրերի աշխատանքներում՝ արդյունավորելով բոլոր ջանքերը՝ ի փառս Աստծո, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ բարեպաշտ հավատացյալ ժողովրդի:

Հոկտեմբերի 31-ին Մեր նախագահությամբ տեղի ունեցավ ժողովի հանդիսավոր բացումը՝ ներկայությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանի եւ Հայաստանի Հանրապետության վարչապետ, Արարատյան հայրապետական թեմի թեմական խորհրդի ատենապետ Տիգրան Սարգսյանի:

Ողջունելով ներկաներին՝ անդրադարձանք Հայ Եկեղեցու ընդհանուր կանոնադրության ստեղծման ուղղությամբ կատարված աշխատանքների նախապատմությանը եւ կանոնադրության մշակման ներկայիս ընթացքին՝ համոզում հայտնելով, որ Եկեղեցու առաքելության իրագործման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է կանոնակարգված գործունեությամբ: Ուղենշեցինք նաեւ ժողովի աշխատանքները, որոնք նվիրված են Ընդհանուր կանոնադրության մաս կազմող՝ Թեմական կանոնադրության ուղենշային փաստաթղթի քննարկմանն ու հաստատմանը:

Թեմական ներկայացուցչական ժողովի նոյեմբերի 2-ի նիստին իր մասնակցությունը բերեց նաև Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը: Նիստին ներկա էր նաև Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Բերճ Սեդրակյանը:

Ողջունելով ՀՀ Նախագահի ներկայությունը ժողովին՝ մեր խոսքում անդրադարձանք Եկեղեցի-պետություն հարաբերություններին և շնորհակալություն հայտնեցինք ՀՀ Նախագահին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և աշխարհասփյուռ թեմերին ՀՀ իշխանությունների կողմից ցուցաբերվող մշտական զորակցության համար:

Այնուհետև եպիսկոպոսաց դասին և բոլոր ժողովականներին իր խոսքն ուղղեց ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը՝ հաջողություն մաղթելով ժողովի աշխատանքներին: Պրն Սարգսյանը ողջունեց բոլոր այն քայլերը, որոնք ուղղված են Հայ Եկեղեցու առաքելության զորացմանը և աշխարհասփյուռ ժողովրդի հոգևոր կարիքների բավարարմանը: Նախագահը մեծապես կարևորեց Հայ Եկեղեցու անգնահատելի դերը Սփյուռքի կյանքում, երիտասարդ սերնդի կրթության գործում՝ կարևորելով Եկեղեցու գործակցությունը բարոյական արժեքների վրա հաստատված Հայրենիք կերտելու ռազմավարական խնդրում: Պրն Սարգսյանը բարձր գնահատեց Հայոց Եկեղեցու միջազգային խաղաղասիրական գործունեությունը և կարևոր ներդրումը էկումենիկ շարժման մեջ: ՀՀ Նախագահը վստահեցրեց, որ պետական կառույցները պիտի շարունակեն զորավիգ լինել Հայ Եկեղեցուն իր բոլոր ձեռնարկներում և խորացնել արդյունավետ համագործակցությունը՝ ի խնդիր մեր ժողովրդի բարօրության և Հայրենիքի պայծառացման:

ՀՀ Նախագահը երախտագիտությամբ անդրադարձավ նաև հսկայածավալ այն գործունեությանը, որ Հայ Եկեղեցին իրականացրել է մեկ պասնամյակի ընթացքում: Բարձր գնահատելով ազգային և հոգևոր արժեքների պահպանման և զարգացման գործում Հայ Եկեղեցու և Հայրապետի ունեցած ավանդը՝ նախագահը Մեզ հանձնեց ՀՀ բարձրագույն՝ «Սուրբ Մեսրոպ Մաշտոցի» շքանշան:

Նիստի ընթացքում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը պատասխանեց ժողովականների հարցերին, որոնք վերաբերում էին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին, ԼՂՀ հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցություններին և մեր ժողովրդի կյանքը հուզող տարբեր խնդիրներին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված Թեմական ներկայացուցչական ժողովը նոյեմբերի 4-ին ավարտեց իր աշխատանքները:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռներից, աշխարհասփյուռ թեմերից ժամանած ներկայացուցիչները քառօրյա ժողովի ընթացքում քննության առան և ընդունեցին Թեմական կանոնադրության ուղենշային փաստաթուղթը:

Աշխատանքների ավարտին Մեր գոհունակությունը և գնահատանքը հայտնեցինք կատարված նախանձախնդիր և քրտնաջան աշխատանքի համար՝ նշելով, որ ժողովականների կողմից պատասխանատվության բարձր գիտակցությամբ մշակված այս փաստաթուղթը, գործադրության դրվելով թեմերում, պիտի նպաստի Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերի զորացմանը և Եկեղեցու առաքելության արդյունավետ իրագործմանը: Մեր գնա-

հապանքն ու օրհնությունը բերեցինք նաև ժողովի ատենապետներին և դիվանին, մաղթեցինք ամենքին Բարձրյալի զորակցությունն ու Նրա Սուրբ Աջի հովանին:

## Է. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
## ա) ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԵԾԱՐՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում Մեր նախագահությամբ տեղի ունեցավ ճեմարանի նախկին տեսուչ, «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի դասախոս Արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանի, «Գրաբար» առարկայի դասախոս Պետրոս Բեղիրյանի և «Հոգեբանություն» առարկայի դասախոս Էլեոնորա Զաքարյանի մեծարման հանդիսությունը:

Հանդիսության ավարտին Հայրապետական Մեր օրհնության և գնահատանքի խոսքն ուղղեցինք մեծարյալ մանկավարժներին, ինչպես նաև անդրադառնալով ուսուցիչների առաքելությանը սերնդի կրթության և դաստիարակության գործում՝ նշեցինք, որ ճեմարանի համար պատիվ է նման դասախոսների ծառայությունը և ներկայությունը, ովքեր ուսուցանել են սաներին խղճի մտոք և պատասխանատվության բարձր զգացումով՝ գիտակցելով, որ կերտում են եկեղեցականների, ովքեր շարունակողը պիտի լինեն տերունապատվեր առաքելության: Մեծարյալ դասախոսների հոգածու խնամքի ներքո կրթված ու դաստիարակված ճեմարանականները միշտ երախտագիտությամբ են հիշելու նրանց աշխատանքը, բերած ծառայությունը և վաստակը:

## բ) ՆՈՐ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 11-ին հանդիսապետությամբ Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի և մասնակցությամբ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի, «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի տնօրեն Սուրեն Նալչյանի, Մայր Աթոռի միաբանների և Էջմիածին քաղաքի բնակիչների, կատարվել է Մայր Աթոռի հարևանությամբ գտնվող մանկական խաղահրապարակի նոր հատվածի բացման արարողությունը: Դեռևս 2003 թ. «Գույումճյան» հիմնադրամի հովանավորությամբ կառուցված խաղահրապարակի նոր հատվածի և նոր սարքավորումների բարերարներն են սիրիաբնակ տեր և տիկին Գաբրիել Ջամբարջիները, ովքեր ազգային կյանքում տարբեր ծրագրերի հետ մեկտեղ իրենց նվիրյալ և ազնիվ ոգով աջակցություն են բերում Հայ Եկեղեցու հովանու ներքո գործող Հայորդյաց տների առաքելությանը և տարբեր կրթական ծրագրերին:

## գ) «ԷՕՌՆԵԿԵԱՆ» ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 12-ին Մեր նախագահությամբ և մասնակցությամբ ազգային բարերար Էդուարդո Էօռնեկյանի տեղի է ունեցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էօռնեկյան» հանրակրթական դպրոցի հանդիսավոր բացումը: Դպրոցի բացմանը ներկա էին Արմավի-

րի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը, ԱԺ պատգամավոր Անահիտ Բախշյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ և հյուրեր:

ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի որոշմամբ Էջմիածնի թիվ 13 դպրոցը հանձնվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և վերակոչվեց «Էօռնեկեան»՝ ի հիշատակ ազգային բարերար Էդուարդո Էօռնեկյանի հանգուցյալ ծնողներ Փանոս Էօռնեկյանի և Սուրբինա Բագրատունու:

Բացման արարողության ընթացքում Մեր խոսքում հույս հայտնեցինք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնության ներքո գործող կրթական այս հաստատությունից ներս դպրոցի սաները պիտի դաստիարակվեն ազգային արժեքներով և հայրենյաց սիրով, զինվեն անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով, որպեսզի հաստատուն քայլեն կյանքում և իրենց բարի ծառայությունը բերեն ժողովրդին, Հայրենիքին և Եկեղեցուն: Մեր գնահատանքը հայտնեցինք դպրոցի բարերար Էդուարդո Էօռնեկյանին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության իրականացման գործում զորակցման համար: Մասնավորաբար գնահատանքի խոսքեր հայտնեցինք Արմավիրի մարզպետին և ՀՀ կրթության ու գիտության նախարարին:

## դ) ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՀՎԱՆ 10-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

Երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 10-րդ տարելիցի կապակցությամբ Հայրապետական բարձր տնօրինությամբ սեպտեմբերի 19-20-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում անցկացվեցին մի շարք միջոցառումներ և արարողություններ:

Այս առիթով տարբեր երկրներից Սուրբ Էջմիածին էին ժամանել թեմակալ առաջնորդներ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչներ՝ Տ. Նորայր եպիսկոպոս Աշգյանը և Տ. Շահե եպիսկոպոս Փանոսյանը, հոգելույս Գարեգին Ա Հայրապետի ընտանիքի անդամներ և Հայ Եկեղեցու բարերար հայորդիներ:

Սեպտեմբերի 19-ին Երևանում՝ Արամ Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիկ համերգասրահում, տեղի ունեցավ հուշ-երեկո և արխիվային լուսանկարների ցուցահանդես՝ նվիրված երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Հանդիսության սկզբում Մեր խոսքում անդրադարձանք Գարեգին Ա Կաթողիկոսի անցած դժվարին ու բարդ ճանապարհին, որում արդյունավորված է նրա ապրած յուրաքանչյուր օրն ու ժամը հոգևոր ծառայության բոլոր հանգրվաններում: Եւ այսօր էլ Գարեգին Ա Կաթողիկոսն իր գործերով և վաստակով, կյանքի օրինակով շարունակում է ապրել մեր ժողովրդի հիշողության մեջ և արժանի գնահատանքով է հիշվելու սերունդների կողմից:

Հյուրերին հիշատակի խոսք ասաց նաև ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, իսկ հոգելույս Հայրապետի մասին իր հուշերից պատմեց տիար Արմեն Սարգսյանը:

Սեպտեմբերի 20-ին Ս. Էջմիածնում հավարտ Ս. Պատարագի Վեհարանում տեղի ու-

նեցավ ընդունելություն, որի ընթացքում Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքը հայտնեցինք բոլոր ներկաներին, ովքեր Հայաստանի և Սփյուռքի փարբեր թեմերից ժամանել էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ իրենց աղոթքն ու խոնարհումը բերելու հոգելույս Հայոց Հայրապետի հիշատակին:

## ե) «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ» ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 50-ԱՄՅԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 3-ին Մեր հրավերով Լիբանանից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին էին ժամանել «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի» անդամները՝ Համախմբումի հիմնադրության 50-ամյակը տոնախմբելու նպատակով: Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքը բերեցինք Համախմբումի նախագահ տիկ. Միմի Հարությունյանին և բոլոր անդամներին, որ արդեն կես դար մեծ նվիրումով և նախաձեռնողությամբ իրենց անսակարկ նպաստն են բերում Մայր Աթոռի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառացմանը՝ զորավիգ լինելով Մայր Եկեղեցու եկեղեցաշեն և ազգօգուտ ձեռնարկներին:

Հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցված Սուրբ և Անմահ Պատարագի Սրբազան արարողության ընթացքում Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արապատ եպիսկոպոս Գալթագճյանն ընթերցեց Հայրապետական օրհնության գիրը՝ «Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի» հիմնադրման 50-ամյակի առիթով:

«Սուրբ Էջմիածնի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի» հիմնադրման 50-ամյակին նվիրված մեկշաբաթյա միջոցառումներն ավարտվեցին Երևանի Կամերային երաժշտության տանը հոկտեմբերի 8-ին տեղի ունեցած հանդիսությամբ:

## զ) «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների և ՀՀ կրթության և գիտության նախարար փիար Արմեն Աշոտյանի, կազմակերպվեց Մայր Աթոռի հովանու ներքո արդեն 8-րդ տարին անցկացվող «Լավագույն ուսուցիչ» ամենամյա հանրապետական մրցույթի հանդիսավոր մրցանակաբաշխությունը, որը կազմակերպվել էր Հայ Եկեղեցու արժանավոր զավակներ Սիլվա և Իոմա Տեր-Ստեփանյանների ազնիվ աջակցությամբ:

«Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց Եկեղեցու պատմություն» և բնագիտական առարկաների գծով անցկացվող մրցույթի արդյունքում 39 ուսուցիչների հանձնվեցին մրցույթի մասնակցության վկայականներ, դրամական պարգևներ և հոգևոր գրականություն: Մրցույթի համար նախատեսված ընդհանուր ֆոնդը կազմում էր 10.000 ԱՄՆ դոլար: Առաջին մրցանակի արժանացան 4 ուսուցիչներ, որոնց հանձնվեց 500-ական ԱՄՆ դոլար դրամական պարգև: Երկրորդ մրցանակին արժանացած 8 ուսուցիչներ ստացան 300-ական դոլար, իսկ երրորդ մրցանակի 11 ուսուցիչներ՝ 200-ական: Դրամական

պարգևներ տրվեցին նաև մասնակից բոլոր ուսուցիչներին՝ 100-ական դոլար գումարաչափով: Մրցանակների արժանացան մրցույթի մասնակից ևս 16 ուսուցիչներ:

## Ը. ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատուն է Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը:

Տարվա ընթացքում Էկումենիկ տարբեր կառույցներում ընդգրկված եկեղեցական և աշխարհիկ մշտական ներկայացուցիչներ մասնակցել են վեհաժողովների, ժողովների և հավաքների:

Հունվար ամսին Գերաշնորհ Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը մասնակցեց դավանակից եկեղեցիների երկխոսության արդյունքում ստեղծված «Եկեղեցու բնույթը, սահմանադրությունը և առաքելությունը» փաստաթղթի խմբագրող կոմիտեի ժողովին:

2009 թ. փետրվար ամսին գումարված ԳՀԽ-ի նիստում առաջադրվել էր 17 եկեղեցականներից և աշխարհականներից կազմված անվանացանկ, որից Մենք ընտրեցինք 7 անձանց: Այդ անձանցից ստեղծված հանձնախումբը պետք է ուսումնասիրի փաստաթուղթը և ներկայացնի կարծիք:

Հանձնախմբի աշխատանքները կոորդինացնում է Գերաշնորհ Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը, անդամներն են Գերաշնորհ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանը, Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Գերաշնորհ Տ. Հակոբ արք. Գլըճեանը, Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանը, Հոգեշնորհ Տ. Գրիգոր ծ. վրդ. Մազուրյանը, Արժանապատիվ Տ. Մեսրոպ քհն. Արամյանը, պրոֆեսոր Աբրահամ Տերյանը:

Հունվարի 31-ին Մեր օրհնությամբ Հայ Եկեղեցու պատվիրակությունը մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու փետրվարի 1-ին Ռուս Ուղղափառ Եկեղեցու նորընտիր Պատրիարք Կիրիլ Ա-ի գահակալության արարողությանը: Պատվիրակության կազմում էին Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Հոգեշնորհ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը:

Մայիսի 11-14-ը Իսպանիայի Մալագա քաղաքում կայացել է Եւրոպական Եկեղեցիների կոնֆերանսի «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբի 6-րդ պլենար հանդիպումը, որտեղ Մայր Աթոռը ներկայացրեց Գերաշնորհ Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը:

Մայիսի 18-20 Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում կայացել է «Եկեղեցիների դիակոնիկ աշխատանքը. նվաճումներ, խնդիրներ, մտահոգություններ» խորագրով համաժողով, որտեղ «Սոցիալական դիակոնիան Հայ Առաքելական Եկեղեցում» զեկույցով Սուրբ Էջմիածինն է ներկայացրել Հայաստանի Բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը:

Մայիսի 29-ից հունիսի 2-ը Լիոնում Եւրոպական եկեղեցիների կոնֆերանսի Միավորված երիտասարդական կազմակերպությունների նախաձեռնությամբ կայացել է կոնֆերանսի 13-րդ ասամբլեային մասնակցող Երիտասարդական պատվիրակությունների նա-

խապատրաստական հավաք՝ «Քրիստոսի կողմից մեկ հույսի կոչված» խորագրով, որին Մայր Աթոռից մասնակցել է Հոգեշնորհ Տ. Շահե արղ. Անանյանը:

Հուլիսի 1-2-ը Աստանայում Համաշխարհային եւ Ավանդական կրոնների առաջնորդների 3-րդ համագումարին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մասնակցել են Գերաշնորհ Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը, Գերաշնորհ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանը եւ Բարեշնորհ Թաթուլ սրկ. Համբարձումյանը:

Հուլիսի 15-21-ը Լիոնում կայացած ԵԵԿ 13-րդ ասամբլեայում Հայ Եկեղեցին մասնակցել է պատվիրակության հետեւյալ կազմով՝ Գերաշնորհ Տ. Նորվան արք. Զաքարյան, Հոգեշնորհ Տ. Առնե վրդ. Շահինյան, Հոգեշնորհ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյան, Արժանապատիվ Տ. Վահրամ քհն. Մելիքյան, երեցկին Փոլա Դեւեջյան եւ օրիորդ Անի Ղազարյան: Ասամբլեայի նոր Կենտրոնական Կոմիտեում Սուրբ Էջմիածինը ներկայացնում է Հոգեշնորհ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը: Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսը վերակառուցող հատուկ աշխատանքային խմբում ընտրվել է Հոգեշնորհ Տ. Շահե արղ. Անանյանը:

Օգոստոսի 26-ից սեպտեմբերի 4-ը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի նիստից հետո հիմքեր են դրվել՝ հետագայում ԵՀԽ-ի հետ առավել արդյունավետ համագործակցելու եւ Հայ Եկեղեցու ներկայությանն ավելի շոշափելի դարձնելու, ինչը պայմանավորված է նաեւ Կենտրոնական կոմիտեում Մայր Աթոռի ներկայացուցիչների՝ Տ. Վիգեն արք. Այքազյանի եւ երեցկին Փոլա Դեւեջյանի արդյունավետ գործունեությամբ:

Սեպտեմբերի 15-20-ը Սեւանի Վազգենյան դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Գեւորգ արղ. Սարոյանը մասնակցել է Հունաստանի Լերոս կղզում Տիեզերական Պատրիարքության կողմից կազմակերպված 2011թ. Ցամայկայում կայանալիք խաղաղարարական միջազգային վեհաժողովի առաջին նախապատրաստական ժողովին:

Սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1-ը Կրետե կղզում տեղի է ունեցել հաշմանդամների տարածաշրջանային ժողով, որտեղ Հայ Եկեղեցին ներկայացրել է Մայր Աթոռի Գրասենյակի աշխատակից Վլադիմիր Սարգսյանը:

Հոկտեմբերի 7-13-ը Հունաստանի Կրետե կղզում տեղի ունեցած Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Հավատք եւ կարգ» հանձնախմբի հանդիպմանը մասնակցել են հանձնախմբի անդամներ, Մայր Աթոռը ներկայացնող Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը եւ Հոգեշնորհ Տ. Շահե արղ. Անանյանը:

Հոկտեմբերի 12-15-ը Երեւանում անցկացվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի հետ համատեղ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Եվրոպական տարածաշրջանային գործընկերների խմբի ժողովը: Ասամբլեան ընտրել է նոր կենտրոնական կոմիտե, որտեղ Մեր օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում է Հոգեշնորհ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյանը: Ասամբլեան ընտրել է նաեւ Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսը վերակառուցող հատուկ աշխատանքային խումբ, որտեղ ընտրվել է Հոգեշնորհ Տ. Շահե արղ. Անանյանը:

Հոկտեմբերի 15-ին Մոսկվայի Պատրիարքության միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակում գումարվեց ԱՊՀ եւ Բալթյան երկրների միջեկեղեցական խորհրդակցական կոմիտեի քարտուղարության նիստը, որտեղ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ներկայացնում է Գերաշնորհ Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը: Նիստի ընթացքում քննարկվել են

հասարակական կրոնական բազմաբնույթ հիմնախնդիրներ, ինչի արդյունքում որոշվել է 2010 թ. Քրիստոնեական միջեկեղեցական խորհրդակցական կոմիտեի ընդլայնված կազմով ժողով գումարել «Քրիստոնեական ընտանիքը փոքր եկեղեցի և առողջ հասարակության հիմք» թեմայով:

Նոյեմբերի 17-19-ը Բելգիայի Մեխելեն քաղաքում տեղի է ունեցել Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի քարտուղարների ամենամյա հանդիպումը, որտեղ Սուրբ Էջմիածինը ներկայացրել է փոխդիվանապետ Հոգեշնորհ Տ. Մեսրոպ արք. Պարսամյանը:

Նոյեմբեր ամսին Վիգեն Սրբազանն Իտալիայի Կորդովա քաղաքում մասնակցել է Կաթոլիկ Եկեղեցու և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջև համատեղ աշխատանքային խմբի հանդիպմանը, որտեղ քննարկվել է եկեղեցական հաղորդության ասպիճանների թեման:

Դեկտեմբերի 2-3-ը Աստանայում Համաշխարհային և Ավանդական կրոնների առաջնորդների համագումարի քարտուղարության 9-րդ նիստին մասնակցել է Գերաշնորհ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանը:

Նոյեմբերի 2-4-ը Անգլիայում կայացած «Կենդանի մոլորակ» թեմայով Հավատքի նվիրյալների Վինձորյան տոնակատարության ժամանակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ, Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Մկրտիչ վրդ. Պռոշյանը ներկայացրել է միջեկեղեցական հարաբերությունների և Հայաստանի Կլոր սեղան Բարեգործական կազմակերպության կողմից պատրաստված բնապահպանական հարցերի 7-ամյա ծրագիր:

Նոյեմբերի 30-ին Մայր Աթոռի դիվանատանը կայացել է Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի հետ իրականացվելիք աշխատանքների պատրաստման առաջին հանդիպումը:

Դեկտեմբերի 16-19-ը Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի կենտրոնական կոմիտեի անդրանիկ նիստի ընթացքում ընտրվել են ԵԵԿ-ի «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբի անդամները, որտեղ Մայր Աթոռից ընտրվել է Հոգեշնորհ Տ. Մկրտիչ վրդ. Պռոշյանը, «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբում ընտրվել է Հոգեշնորհ Տ. Մեսրոպ արք. Պարսամյանը, իսկ Եվրոպայում միգրացիայի հարցերով զբաղվող Եկեղեցիների Խորհրդի նախնական հանձնախմբում՝ Արժանապատիվ Տ. Պարույր քհն. Ավետիսյանը: Նիստի ընթացքում Կենտրոնական կոմիտեն հատուկ հանձնարարական է տվել գլխավոր քարտուղարին. ԵԵԿ-ի աշխատանքային օրակարգ մտցնել Վրաստանում հայկական եկեղեցիների իրավական կարգավիճակին առնչվող հարցերը և այդ մասին զեկուցել 2010 թ. սեպտեմբերին Ուտրեխտում (Հոլանդիա) կայանալիք Կենտրոնական կոմիտեի նիստին:

## Թ. ԵԿԵՂԵՑԻ - ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության պետական իշխանությունների հետ հարաբերությունները շարունակվում են ընթանալ համագործակցության ոգով:

Անցյալ տարվա ընթացքում պետության հետ պարբերական համագործակցություն է

դրսևորվել մշակույթի, կրթության, փնտրեսական ծրագրերի իրագործման, սոցիալական օգնության բաշխման ոլորտներում:

Կառավարության կողմից շարունակվել են եկեղեցական շինություններին կից հողատարածքների և եկեղեցապատկան շինությունների վերադարձումը Առաքելական Սուրբ Եկեղեցուն, ինչպես նաև հողատարածքների տրամադրումը եկեղեցիների շինության համար:

Մշակույթի նախարարության հետ համագործակցությամբ ստեղծված Մշակույթի նախարարության և Մայր Աթոռի միասնական հանձնաժողովը շարունակում է վանքերի ու եկեղեցիների չափագրության ու պահպանության աշխատանքները հստակեցնելու ծրագիրը:

Եկեղեցի-պետություն փոխհարաբերության շրջանակում շարունակվում են նաև համատեղ խորհրդակցությունները՝ հընթացս զանազան օրենսդրական ակտերի ստեղծման գործընթացների. Մայր Աթոռի դիվանապան «Պետական և հասարակական կառույցների հետ հարաբերությունների գրասենյակը» գործուն մասնակցություն է բերում ՀՀ Խղճի ազատության մասին օրենքի լրափոխման աշխատանքներին, որն ընդունվել է առաջին ընթերցմամբ և այս երկրորդ ընթերցմամբ պետք է վերջնականապես ընդունվի:

Անցյալ տարվա ընթացքում պետական և հասարակական կառույցների հետ հարաբերությունների գրասենյակի կողմից աշխատանքներ են կատարվել նաև Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական Եկեղեցու հարաբերությունները կարգավորող օրենքի մեջ հավելումներ կատարելու ուղղությամբ, մշակվել են առաջարկություններ՝ կառավարություն ներկայացնելու համար:

Ուրախությամբ պիտի նշենք, որ անցյալ տարի Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի նոր բարեփոխված փաբբերակում ընդգրկվել է Մայր Աթոռի առաջարկությունը՝ արտերկրում ծառայության կոչված եկեղեցականների Հայաստան վերադարձին տրամադրել մաքսային արտոնություններ:

ՀՀ մաքսային օրենքի 105-րդ հոդվածի 6.1 կետի բարեփոխված տարբերակը հետևյալն է. «Օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետները և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առևտրական և այլ կցորդները, **Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու այլ երկրների թեմերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հոգևոր ծառայության նշանակված քաղաքացիները** ծառայության ավարտից հետո առանց մաքսատուրքի վճարման կարող են ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը»: Ընդունվել է 08. 06. 2009 թ.:

Նշենք նաև, որ ազգային-եկեղեցական զանազան հոբելյանների ու հիշատակությունների առիթով ստեղծվող պետական հանձնախմբերում միշտ ընդգրկվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչը:

## Ժ. ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## ա) ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆ

ԳՀՃ-ի տեսուչն է Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը: Ճեմարանում դասավանդում են 47 դասախոսներ, որոնցից 21-ը հոգեւորականներ են, իսկ 26-ը՝ աշխարհական: Աշխարհիկ դասախոսներից 2-ը գիտությունների դոկտոր են, 14-ը՝ գիտությունների թեկնածու: 2009-2010 ուսումնական տարում ճեմարանի դասախոսական կազմը համալրվել է Մայր Աթոռի միաբան 10 հոգեւորականներով, ինչպես նաեւ դասավանդելու են հրավիրվել նոր դասախոսներ:

Ուսումնական տարվա ընթացքում ուսանողները մասնակցել են Երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 10-րդ տարելիցին նվիրված միջոցառմանը: Ճեմարանում կազմակերպվել են ֆիլմերի ցուցադրումներ, սաները հանդիպել են պետական եւ հոգեւոր բարձրաստիճան այրերի:

2009-2010 ուստարվա ընթացիկ քննություններին զուգահեռ Դ եւ Զ լսարաններում կազմակերպվել են պետական քննություններ, արդյունքում ճեմարանն ունեցել է 23 շրջանավարտ:

2009-2010 ուստարվա համար ընդունվել է 59 դիմորդ՝ 31-ը Գեւորգյան Ճեմարան, 28-ը՝ Սեւանի Վազգենյան դպրանոց: Գեւորգյան հոգեւոր ճեմարանում այսօր սովորում են 117 սաներ: Ճեմարանն անցած ժամանակաշրջանում կազմակերպել է նաեւ 18 շրջանավարտների ավարտաճառերի պաշտպանություն:

## բ) ՍԵՒԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑ

Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսուչն է Հոգեշնորհ Տ. Գեւորգ աբեղա Սարոյանը, փոխտեսուչը՝ Արժանապատիվ Տ. Մինաս քահանա Մարտիրոսյանը: Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում անցյալ տարում դասերն ընթացել են կանոնավոր կերպով: Դպրանոցում սովորում են 72 սաներ: Անցյալ տարում դպրանոցի ուսումնական կազմը համալրվել է նոր դասախոսներով:

Վազգենյան դպրանոցը, շնորհիվ եկեղեցական եւ աշխարհիկ բարերարների, համալրվել է հայ եւ օտարալեզու գրականությամբ, ինչպես նաեւ տնտեսական եւ խոհանոցային պարագաներով:

Դպրանոցի համեմատաբար թույլ սաները ամառային արձակուրդի ընթացքում մասնակցել են Գեւորգյան հոգեւոր ճեմարանում կազմակերպված հայոց լեզու եւ գրականություն, ռուսաց լեզու եւ անգլերեն առարկաների դասընթացներին: Դ լսարանի սաները, հաջողությամբ հանձնելով պետական քննությունները, փոխադրվել են Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 5-րդ լսարան:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Կյոր սեղանի կողմից Կանաչ աստվածաբանության ծրագրերի շրջանակում դպրանոցի տարածքում բացվել է արեւային էներգիայի

շահագործման համակարգ, որի շնորհիվ կրճատվում է ջեռուցման համար ծախսվող էլեկտրաէներգիան:

Դասերին զուգահեռ կազմակերպվել են տարբեր դասախոսություններ, ուխտագնացություններ, միջոցառում-հանդիպումներ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ուսանողների, հասարակական եւ մշակութային գործիչների հետ: Դպրանոցի սաները մասնակցել են նաեւ Երեւանի՝ Արամ Խաչատրյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցած հուշ-երեկոյին՝ նվիրված Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա Վեհափառի մահվան 10-րդ տարելիցին: Հունվար ամսին լույս է տեսել «Վազգենյան դպրանոց» հոգեւոր-մշակութային եռամսյա պարբերականի երրորդ համարը, որին թղթակցում են դպրանոցի սաներն ու դասախոսները, ինչպես նաեւ այլ բուհերի ուսանողներ:

Սուրբ Ստեփաննոս Նախավկա սարկավագի տոնին, ընկալյալ ավանդության համաձայն, Վազգենյան դպրանոցի Բ եւ Դ լսարանի սաները, ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանի, ստացան դպրի եւ ուրարակրի աստիճաններ:

## զ) ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏՆԵՐ

Հայորդյաց տների հոգեւոր տեսուչն է Հոգեշնորհ Տ. Կոմիտաս վրդ. Հովնանյանը: Համակարգում ներգրավված են 6 հայորդյաց տներ (Էջմիածնի, Աշտարակի, Վանաձորի, Երեւանում՝ Նորքի, Մալաթիայի եւ Արաբկիրի), Մանրանկարչության արվեստի կենտրոնը, Աղվերանի «Մասիս» պանսիոնատը եւ Էջմիածնի ծերանոցը: «Հայորդյաց տներ» համակարգում աշխատում են 306 անձինք, որոնցից 7-ն աշխատում են քաղ. իրավական պայմանագրով, իսկ եւս 7-ը գտնվում են ֆիզ. արձակուրդում:

2009 թ. ընթացքում Հայորդյաց տների մանկավարժական կազմը համալրվել է նոր, երիտասարդ կադրերով, որոնցից շատերը Հայորդյաց տան նախկին սաներ են, ինչը ոգեւորող է եւ հուսադրող: Հայորդյաց տներ հաճախող սաների թիվը 2623 է: ՀՏ-ների սաները տարվա ընթացքում ելույթներ են ունեցել տարբեր միջոցառումներում, այդ թվում «Հանրային» եւ «Վան» ռադիոկայաններում հանդես են եկել հեղինակային ծրագրերով եւ հարցազրույցներով: 2009 թ. ընթացքում լույս են տեսել Հայորդյաց տների «Ջվարթունք» հանդեսի 17-րդ եւ 18-րդ համարները:

Տարվա ընթացքում Հայորդյաց տների սաները հանդես են եկել բազմապիսի միջոցառումներով՝ նվիրված եկեղեցական եւ պետական տոներին, կազմակերպել են մրցույթ ցուցահանդեսներ:

Հայորդյաց տների սաները ողջ տարվա ընթացքում մասնակցել են ավելի քան 250 համայնքային, քաղաքային, հանրապետական եւ կառավարական միջոցառումների, ինչպես նաեւ մրցույթների՝ գրանցելով մի շարք հաջողություններ:

2009 թ. ընթացքում Հայորդյաց տներում կատարվել են մի շարք վերանորոգումներ: Արարատյան Հայրապետական թեմի հետ համագործակցության արդյունքում լուծվել է Մանրանկարչության արվեստի կենտրոնի ջեռուցման խնդիրը, Մայր Աթոռի շինարարական բաժնի աշխատակիցների աշխատանքների շնորհիվ վերանորոգվել է Նորքի Հայորդյաց տան տանիքը (մոտ 140 ք/մ):

## ԺԱ. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԱՆՔԵՐ
## ա) ՎԱՆՈՐԵԻՑ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

2009 թ. հունիսի 15-ին Հայրապետական Մեր տնօրինությամբ վանորեից տեսուչ նշանակվեց Հոգեշնորհ Տ. Արտակ վրդ. Տիգրանյանը: Տեսչությունը 2009 թ. հունիսի 24-ից սկսյալ գումարել է 6 ժողով վանահայրերի հետ: Ժողովներ են կազմակերպվել նաև վանքերի պաշտոնեության հետ: Վանքերում ստեղծվել են միանման ժամադրության մատյաններ, արխիվներ: Երեք ամիսը մեկ վանահայրերը ներկայացնում են վանքի գործունեության հաշվետվություն և առաջիկա եռամսյակի ծրագիր: Կատարվել են վանքերում ծիսակատարության առնչվող որոշակի կանոնականացումներ: Յուրաքանչյուր ամիս վանահայրերը ներկայացնում են իրենց մոմի, Ս. Պսակի և Ս. Մկրտության կտրոնների հաշվետվությունները:

Կանանց մենաստանի կանոնադրությունը մշակման փուլում է:

Որոշումների և հանձնարարականների ընթացքին հետևելու համար Վանորեից տեսուչը պարբերաբար այցելում է վանքեր:

## բ) ՍՈՒՐԲ ԽՈՐ ՎԻՐԱՊ ՎԱՆՔ

Սուրբ Խոր Վիրապ վանքի վանահայրն է Հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: Վանքում անցյալ տարվա ընթացքում կատարվել են մի շարք վերանորոգչական աշխատանքներ: Նորոգվել է մատաղատան ջրագիծը, անցկացվել խմելու ջրագիծ, փոխվել և նորոգվել են վանքի էլեկտրական լարերը, կատարվել է վանք բարձրացող աստիճանավանդակի մասնակի նորոգում, զրեթե ամբողջական փոխվել է աջակողմյան մասնաշենքի տանիքի իզոգամը: Նորոգություններ են կատարվել նաև վանքի եկեղեցիներում:

Վանքը համալրվել է 7 անուն եկեղեցական զույքով և սպասքով:

2009 թ. ընթացքում Սուրբ Խոր Վիրապ վանքում կատարվել է 690 Մկրտություն և 430 Պսակ:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի Ելն ի վիրապէն տոնին Մայր Աթոռից տարվել է Հայրապետի մասունքը, մատուցվել Սուրբ Պատարագ:

## գ) ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՆՔ

Սուրբ Հռիփսիմե վանքի վանահայրն է Հոգեշնորհ Տ. Մատթեոս աբեղա Պողոսյանը: 2009 թ. վանք են այցելել բազմաթիվ ուխտավորներ, հոգևոր սպասավորների կողմից կատարվել են եկեղեցական արարողությունները, նշվել եկեղեցական տոնակատարությունները: Տարվա ընթացքում Սուրբ Հռիփսիմե վանքում կատարվել են գյուղատնտեսական աշխատանքներ և վանքի տարածքի մասնակի խնամք, )բերքահավաքություն և պտղի հանձնում Մայր Աթոռին: Շինարարական աշխատանքները սկսելու համար կազմվել է նախահաշիվ: Վանքը համալրվել է 2 անուն եկեղեցական զույքով և սպասքով:

2009 թ. ընթացքում Ս. Հռիփսիմե վանքում կատարվել է 539 Մկրտություն և 212 Պսակ:

## դ) ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔ

Սուրբ Գայանե վանքի վանահայրն է Հոգեշնորհ Տ. Մակար աբեղա Հակոբյանը: Տարվա ընթացքում Սուրբ Գայանե վանքում պարբերաբար կատարվել են եկեղեցական արարողությունները: 2009 թ. վանքում իրենց ծառայությունն են շարունակել նաև վանաբնակ միաձնուհիները: Ս. Գայանե վանքում կատարվել են մասնակի վերանորոգումներ, ինչպես նաև կազմակերպվել է ծառատունկ (150 ծառ): Վանքը համալրվել է 14 անուն եկեղեցական գույքով և սպասքով:

Տարվա ընթացքում Ս. Գայանե վանքում կատարվել է 362 Մկրտություն և 211 Պսակ:

## ե) ՍՈՒՐԲ ՇՈՂԱԿԱԹ ՎԱՆՔ

Հայրապետական Մեր տնօրինությամբ 2009 թ. նոյեմբեր ամսից Տ. Ղևոնդ աբեղա Ղևոնդյանը, ազատվելով Ս. Գեղարդավանքի վանահոր պարտականություններից, նշանակվեց Ս. Շողակաթ վանքի վանահայր:

2009 թ. Սուրբ Շողակաթ վանքում եկեղեցական արարողությունների մատուցմանը զուգընթաց տարվել են ուսուցողական և քարոզչական աշխատանքներ՝ ի նպաստ հավատացյալների հոգևոր դաստիարակության: Վանքում կատարվել են մի շարք աշխատանքներ. վանքի բակում կազմակերպվել է ծառատունկ (70 ծառ), բարեկարգվել են բակի որոշակի հատվածները, փոխվել եկեղեցու արևմտյան և հարավային մուտքերի, երկու ավանդատների դռները և մոմավաճառի սեղանը: Վանքը համալրվել է 11 անուն եկեղեցական գույքով և սպասքով:

Ս. Շողակաթ վանքում 2009 թ. ընթացքում կատարվել է 129 Մկրտություն և 125 Պսակ:

Սուրբ Շողակաթ վանքին կից շարունակում է գործել Երիտասարդաց միությունը, որի շրջանակներում կատարվում են ուխտագնացություններ և զանազան միջոցառումներ: Տարվա ընթացքում հանդիպումներ են կազմակերպվել ուխտավորների, այլ միությունների և աշակերտական խմբերի հետ:

## զ) ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ

Նոյեմբեր ամսից Վանորեից փոխփոխ Տ. Շնորհք աբեղա Սարգսյանը Հայրապետական տնօրինությամբ ծառայության կոչվեց Ս. Գեղարդավանքում՝ որպես վանահայր: Սուրբ Գեղարդավանքը, լինելով հայոց նվիրական ուխտավայրերից մեկը, անցյալ տարի նույնպես ընդունել է բազմաթիվ ուխտավորների: Վանքի տարածքում կատարվել են մի շարք բարենորոգչական աշխատանքներ: Վանքի երգչախումբը համագործակցում է «Յունեսկոյի» հետ, ինչի շրջանակներում այցելել են Գերմանիա: «ՎիվաՍել» կազմակերպության կողմից վանքի տարածքում տեղադրվել են էռալեզու ցուցավահանակներ: Վանքն անցյալ տարի կատարել է 680 կգ մեղրի հանձնում Մայր Աթոռին:

Տարվա ընթացքում վանքը համալրվել է 2 անուն եկեղեցական սպասքով, ինչպես նաև ստացել է դրամական նվիրատվություն:

Կատարվել է 358 Մկրտություն և 50 Պսակ:

## է) ՍԵՒԱՆԻ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ

Սեւանի Սուրբ Առաքելոց վանքի վանահայրն է Արժանապատիվ Տ. Մինաս քհն. Մարտիրոսյանը: Վանքի տարածքում շարունակվել են բարեկարգչական աշխատանքները, շարունակվում է սանհանգույցի շինարարությունը: Կազմակերպվել է ծառատունկ (22 տոճի) վանքի տարածքում, փոխվել են Ս. Առաքելոց եկեղեցու խորանի եւ ավանդատան մուտքի վարագույրները: Ս. Սեւանավանքը համալրվել է 12 անուն եկեղեցական գույքով եւ սպասքով:

Տարվա ընթացքում Ս. Առաքելոցում կատարվել է 134 Մկրտություն եւ 107 Պսակ:

## ը) ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր տեսուչն է Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը: 2009 թ. Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հավուր պատշաճի կատարվել են եկեղեցական արարողությունները: Հայրապետական Մեր օրհնությամբ Սուրբ Գրիգոր Լուսավորչի Նշխարաց գյուտի տոնը հռչակվել է որպես Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ուխտի օր: Տոնի օրը մատուցվում է ուխտի Պատարագ, ինչը մեծ խանդավառություն է առաջացնում հավատացյալների շրջանում:

Եկեղեցու հովանու ներքո գործում են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» երիտասարդաց միությունը, մանկական երգչախումբը, նկարչության խմբակ երեխաների համար եւ ասեղնագործության խմբակ աղջիկների համար: Ամեն երեքշաբթի՝ երեկոյան ժամերգությունից հետո, եկեղեցու հոգեւոր սպասավորների նախաձեռնությամբ տեղի են ունենում Սուրբգրային սերտողություններ հավատացյալների հետ: Եկեղեցու հոգեւոր սպասավորների մասնակցությամբ կազմակերպվել են հավատացելոց ուխտագնացություններ Հայաստանի տարբեր վանքեր ու եկեղեցիներ, եկեղեցու հոգեւորականների պարբերական այցելություններ ծերանոցներ, մանկատներ եւ հատուկ դպրոցներ, ինչպես նաեւ հանրակրթական դպրոցներ եւ բուհեր: Անցյալ տարվա ընթացքում եկեղեցում մկրտվել են 1224 հայորդիներ եւ պսակադրվել են 506 զույգեր:

## ԺԲ. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԲԱԺԻՆՆԵՐ
## ա) ԴԻՎԱՆԱՏՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանը Կաթողիկոսարանի կառույց է: Դիվանապետն է Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Դիվանը սահմանված կարգով վարում է Կաթողիկոսարանի քարտուղարությունը, զբաղվում է պետական, պաշտոնական, դիվանագիտական, հասարակական-մշակութային, միջկրոնական, միջեկեղեցական, միջհաբանվանական, ներեկեղեցական եւ այլ հարցերով:

2009 թ-ին դիվանատունը վերակազմավորվեց՝ իր մեջ ընդգրկելով հետեւյալ ստորաբաժանումները՝

1. Պետական եւ հասարակական կառույցների հետ հարաբերությունների գրասենյակ /պատասխանատու՝ Տ. Մեսրոպ արեղա Պարսամյան/,

2. Գերագույն հոգեւոր խորհրդի, Եպիսկոպոսաց ժողովների կազմակերպման եւ Նվիրապետական Աթոռների հետ հարաբերությունների գրասենյակ /պատասխանատու՝ Տ. Պարթեւ արեղա Բարսեղյան/,

3. Ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակ /պատասխանատու՝ Տ. Պարույր քահանա Ավետիսյան/:

Նշյալ բաժինների հետեւողական աշխատանքների շնորհիվ դիվանատան գործունեությունն ընթացավ առավել համակարգված ձեւով՝ նպաստելով Մայր Աթոռի առաքելության արդյունավոր իրականացմանը:

Դիվանատան նախաձեռնությամբ տարվա ընթացքում կազմակերպվեցին միջոցառումներ, հանդիպումներ, քահանայից հավաքներ, ժողովներ, որոնցից նշանակալի են տարվա ընթացքում գումարվող Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովները, հոկտեմբերի 29-ին գումարված Եպիսկոպոսաց հավաքը եւ հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 4-ը կազմակերպված Թեմական ներկայացուցչական ժողովը, որի ընթացքում քննության առնվեց եւ հաստատվեց Թեմական եւ Ծխական կանոնադրության ուղենիշը:

Դիվանատունն իր մասնակցությունն ունեցավ նաեւ Երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 10-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին:

Տարվա ընթացքում դիվանատանը ստացվել են շուրջ 5.670 գրություններ ու նամակներ, եւ պատրաստվել ու առաքվել են 4804-ը:

## բ) ԿԱԴՐԵՐԻ ԲԱԺԻՆ

Մայր Աթոռի կառույցներում կան քաղաքացիա-իրավական պայմանագրով աշխատողներ, ներքին համատեղություններ: Առ 2010 թ. հունվար 1-ը Մայր Աթոռի կառույցներում զբաղեցրած հաստիքների ընդհանուր թիվը կազմել է 1073, որից Մայր Աթոռում զբաղեցրած հաստիքները՝ 760, Հայորդյաց տներ՝ 313:

2009 թ. ընթացքում աշխատանքից ազատվել են 168 աշխարհականներ, որոնցից 60-ը տեղեկատվական համակարգի Հեռուստատեսության ենթաբաժնի աշխատողներն են, ովքեր փոխադրվել են աշխատանքի «Շողակաթ» ՍՊԸ: Աշխատանքի են ընդունվել 204 աշխարհականներ, նաեւ Մայր Աթոռի աշխատակազմի մեջ է ընդգրկվել «Էօսնեկյան» վարժարանի մանկավարժական կազմը՝ 49 հոգի:

## գ) «ԳԱՐԵԳԻՆ Ա» ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ-ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Գարեգին Ա» աստվածաբանական-հայագիտական կենտրոնի տնօրենն է տիար Ազատ Բոզոյանը: Կենտրոնն ունի աշխատանքի երկու ուղղություն՝ գրադարան եւ գիտական կենտրոն.

**ա) Գրադարան**

Կենտրոնի գրքերի քանակը այսօր ավելի քան 36 000 միավոր է: Կենտրոնն ունի շուրջ 300 կտոր հնատիպ գրականություն: Վերջին մեկ տարվա ընթացքում կենտրոնը համալրվել է շուրջ 1000 միավոր գրքով: Արդյունավետ է համագործակցությունը Քոլեջ դե Ֆրանսի բյուզանդագիտական գրադարանի հետ, խորացվել են կապերը Դիժոնի, Մոնպելիեի եւ Բոլոնիայի համալսարանների հայագիտության ամբիոնների հետ:

Կենտրոնը պատրաստում է գրադարանի էլեկտրոնային քարտարանը: Վերահսկվում է գրադարանային ողջ ֆոնդի հաշվառումը:

Կենտրոնն այժմ ունի ավելի քան 360 ընթերցող: Դրսի ընթերցողներն օգտվում են ֆոնդերից տեղում:

Կենտրոնն իր մասնակցությունն է ունեցել օգոստոս ամսին հայկական գրադարանների միջազգային առաջին համագումարի աշխատանքներին եւ հիմնական փաստաթղթերի ստեղծմանը:

**բ) Գիտական կենտրոն.**

Այժմ կենտրոնի առջեւ խնդիր է դրվել ստեղծել հայ միջնադարյան կանոնական գրականությունը եւ Հայոց Կաթողիկոսական վավերագիր ժառանգությունը հետազոտող գիտական կառույց: Կենտրոնում շարունակվում է Վահան վրդ. Բաստամյանի կանոնագիտական երկերի ժողովածուն հրատարակելու աշխատանքը: Պատրաստվում է ԺԲ դարի հայ-բյուզանդական նամակագրության վավերագրերի ժողովածուի գիտական բնագիրը, ինչպես նաեւ Մելիք-Թանգյանի «Եկեղեցական իրավունք» դասագրքի նոր, ծանոթագրված հրատարակությունը:

## դ) ԱՐԽԻՎ

Հաշվետու տարվա 3-րդ եռամսյակին Մայր Աթոռի արխիվը հասպատվել է նորակառույց դիվանատան համապատասխան հարկաբաժնում: Տարվա ընթացքում Մայր Աթոռի արխիվի ֆոնդը հավելվել է ձեռք բերված նոր վավերագրերով: Արխիվում կատարվել են արխիվային ֆոնդերի մշակման եւ դասակարգման, ինչպես նաեւ նոր արխիվացված նյութերի մշակման աշխատանքներ, թվայնացվել են «Վազգեն Ա Հայրապետ», «Գարեգին Ա Հայրապետ» եւ «Գարեգին Բ Հայրապետ» ֆոնդերի լուսանկարները, ինչպես նաեւ կադրային փաստաթղթեր եւ հրամաններ: Երջանկահիշատակ Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 10-րդ տարելիցի կապակցությամբ հրատարակության է պատրաստվել «Մարդ է որ գործէ գերկիր» խորագրով կենսագրական գրքույկը: Մայր Աթոռի արխիվի կողմից կազմակերպվել է նաեւ արխիվային լուսանկարների ցուցահանդես Ա. Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիկ մեծ համերգասրահում:

Տարեվերջին Մայր Աթոռի արխիվային պահոցը համալրվել է մետաղյա հատուկ պահարաններով:

## ե) ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՔԴԿ-ի տնօրենն է Հոգեշնորհ Տ. Վարդան արեղա Նավասարդյանը: Կենտրոնի գործունեությունը ծավալվում է գլխավորաբար չորս ոլորտներում ա) Նախադպրոցական, բ) Միջնակարգ ընդհանուր կրթության, գ) Կիրակնօրյա կամ Մեկօրյա կրթության, դ) Հատուկ տիպի եւ մանկատների կրթության:

**ա. Նախադպրոցական ոլորտ**

Հունվար-մայիս ամիսներին կյանքի է կոչվել «Սուրբ Զատիկը մանուկների աչքերով» մրցույթ-փառատոնը՝ մասնակցությամբ ՀՀ 14 քաղաքների 100-ից ավելի մանկապարտեզների: Ծրագիրն իրականացվել է թեմակալ առաջնորդների օրհնությամբ եւ աջակցությամբ, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ:

Ավարտվել է «Սրբազան պատումները մանկանց սրտերում» մանկական գրքի խմբագրման եւ հայատառ նկարների ուրվագծման աշխատանքները եւ առաջիկայում նախատեսվում է լույսընծայել «World Vision» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ:

Հրատարակության է պատրաստվել նաեւ «Հայը եւ իր երգը» ազգային-եկեղեցական տոներին եւ սրբություններին նվիրված մանկապատանեկան երգերի նոտագիրքը:

Քրիստոնեական դաստիարակության ծրագրային աշխատանքների իրականացման համար ձեւավորված մասնագիտական հանձնախումբն իր աշխատանքը մեկնարկել է ս/թ հունվար ամսից:

**բ. Միջնակարգ կրթության ոլորտ**

2009 թ. մարտ-մայիս ամիսներին ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի հետ համատեղ իրականացվել են Երեւանի մասնավոր դպրոցների, ինչպես նաեւ Քանաքեռ-Զեյթուն եւ Ավան համայնքների դպրոցների «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսուցիչների վերապատրաստման դասընթացները՝ մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների, Հայաստանի Աստվածաշնչային ընկերության ներկայացուցչի եւ ԿԱԻ մեթոդիստմասնագետների: Վերապատրաստման դասընթացներ են իրականացվել նաեւ Գուգարքի եւ Սյունյաց թեմերի... 

Թեմերի բարեխնամ առաջնորդների օրհնությամբ եւ տեղական իշխանությունների հետ համագործակցությամբ ՀՀ 14 տարածաշրջաններում իրականացվել են «Հայ Եկեղեցու պատմություն» ուսուցիչների ամենամյա մասնագիտական սեմինարներ:

2009 թ. առաջին անգամ Գյումրի քաղաքում Շիրակի թեմի առաջնորդ Սրբազանի անմիջական աջակցությամբ փորձնականորեն անցկացվել է Հայ Եկեղեցու պատմություն առարկայի օլիմպիադա նախ՝ միջդպրոցական, ապա՝ համաքաղաքային: Միջոցառման գոհացուցիչ արդյունքներից հետո Մայր Աթոռի ՔԴԿ-ի կողմից ՀՀ ԿԳ նախարարին ուղղված գրավոր դիմում-առաջարկով եւ նախարարի հատուկ հրամանով Հայ Եկեղեցու պատմություն առարկան համալրել է հանրակրթական դպրոցների օլիմպիադաների առարկայացանկը:

Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս Առաքյալների տոնին՝ նոյեմբերի 28-ին, իրականաց-

վել է գնահատանքի միջոցառում՝ նվիրված հանրակրթական դպրոցների այն փնօրեններին, ովքեր լավագույնս աջակցել են դպրոցում «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի կայացմանը և քրիստոնեական կրթության և դաստիարակության ծավալմանը:

2009 թ. կյանքի է կոչվել «Սուրբ Պատարագն աշակերտի շուրթերով» հանրապետական մրցույթ-փառատոնը՝ ՀՀ շուրջ 700 դպրոցների մասնակցությամբ: Ծրագիրը, որի նպատակն էր աշակերտներին հաղորդ դարձնել Սուրբ Պատարագի խորհրդին և երգեցողությանը, իրականացվել է երեք փուլով՝ տարածաշրջանային, մարզային և հանրապետական:

**գ. Մեկօրյա կրթության ոլորտ**

«World Vision» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվել է «Մեր կյանքն Աստծու հետ է» ուսումնական ձեռնարկների շնորհանդեսը: Դասագրքերի հիման վրա մշակվել է մեկօրյա կրթօջախների ուսումնական ծրագիր, որի վերամշակման վերջնական աշխատանքներն իրականացվում են մեկօրյա կրթօջախների հարցերով զբաղվող հանձնախմբի կողմից:

2009 թ. հունիս ամսին Ծաղկաձորի Գրողների միության տանն իրականացվել են մեկօրյա կրթօջախների ուսուցիչների վերապատրաստման հնգօրյա դասընթացներ, որոնց մասնակցել են շուրջ 100 ուսուցիչներ Հայաստանյան թեմերի շուրջ 50 մեկօրյաներից: Վերապատրաստումներին հաջորդել է կոնֆերանս՝ Հայաստանյան թեմերի շուրջ 20 քահանաների մասնակցությամբ:

**դ. Հատուկ կրթության ոլորտ**

Տարվա ընթացքում կատարվել են այցելություններ ՀՀ 8 պետական մանկատներ և կազմվել վերջիններիս վիճակագրական տվյալների բազան, ինչի ամբողջացումից հետո՝ կազմվել է ծրագիր, որը հետապնդում է ռազմավարական երկու ուղղություն՝ 1. մանկատների սաների քրիստոնեական կրթություն և դաստիարակություն, 2. մանկատների սաների մասնագիտության ձեռքբերման ապահովում՝ արհեստագործական խմբակներում ներգրավվելու միջոցով:

Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հետ համատեղ ընթացիկ աշխատանքներ են իրականացվում Հայ Եկեղեցու պատմություն առարկայի դասագրքերի Բրայլյան տարբերակի կազմության և լույսընծայման ուղղությամբ: Հրատարակության ընթացքի մեջ են 5-րդ և 6-րդ դասարանների դասագրքերը:

Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի, Տիկնիկային արվեստի գործիչների միջազգային միության հայկական կենտրոնի և «World Vision» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով ՀՀ 8 պետական մանկատներում կյանքի է կոչվել «Ամանորյա ժպիտներ մանկատներում» տոնական ծրագիրը:

**ե. «Էօռնեկեան» հանրակրթական դպրոց**

Տևական գործընթացից հետո ՀՀ կառավարության որոշմամբ Մայր Աթոռին է տրամադրվել Վաղարշապատի թիվ 13 դպրոցը:

Սեպտեմբերի 12-ին տեղի է ունեցել դպրոցի բացման և անվանակոչության հանդիսավոր արարողությունը, որին ներկա են եղել բարերարներ տիար Էդուարդո Էօռնեկյանը, բարձրաստիճան հոգևոր և պետական այրեր, հյուրեր: «Էօռնեկյան» հանրակրթական դպրոցի տնօրենն է տիար Սահակ Զաքարյանը:

Այժմ դպրոցում ձեւավորված հոգաբարձուների խորհուրդը լրամշակում է դպրոցի կանոնադրությունը:

Դպրոցը հագեցած է «Փյունիկ» հիմնադրամի նախագահ փիլար Լ. Սարգսյանի կողմից տրամադրված լաբորատոր սարքավորումներով, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի կողմից տրամադրված աշակերտական սեղաններով եւ այլ անհրաժեշտ գույքով:

Դպրոցի սեփականացման գործընթացին նախորդել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից նախադպրոցական, տարրական եւ միջնակարգ դպրոցներ հիմնելու լիցենզիայի ձեռքբերումը, որին ողջունել եւ գործնականորեն աջակցել է Կրթության եւ գիտության նախարար փիլար Ա. Աշոտյանը:

## գ) ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրենն է Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: Բաժնի կողմից 2009 թ. կատարվել են նոր աշխատանքների, օտար լեզուներից եւ գրաբարից թարգմանությունների, ինչպես նաեւ քրիստոնեական դաստիարակչական, ուսուցողական գրքույկների, մեկնողական գրականության, միջեկեղեցական հարաբերությունների վերաբերյալ տպագրումներ, վանական համալիրները ներկայացնող ալբոմների, սրբոց վարքերի եւ վկայաբանությունների վերաբերյալ աշխատանքների տպագրումներ:

Տարվա ընթացքում հրատարակչական բաժինը տպագրել է 40 անուն աշխատանքներ, որոնք առանձնանում են իրենց արդիականությամբ եւ պարզ ու հանրամատչելի լեզվով:

## է) ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Մայր Աթոռի ճարտարապետաշինարարական բաժինը Մայր Աթոռի շինարարական ծրագրերի իրականացման ընթացքում 2009 թ. ձեռնարկել է հետեւյալ գործունեությունը.

**Ա/ Ավարտված նախագծային աշխատանքներ**

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի նոր մասնաշենքի կառուցման նախագիծ,
Վեհարանի հանդիսությունների դահլիճի կառուցման նախագիծ,
Հին Վեհարանի հիմնանորոգման նախագիծ,
Միաբանական ճաշարանի նախագիծ,
Մայր Աթոռի պոմպակայանի վերակառուցումը, լվացքատան նախագիծ,
էլ. ենթակայանի նախագիծ:

**Բ/ Շարունակվող շին. աշխատանքներ**

Եկեղեցի Երեւանի էրեբունի թաղամասում,
Եկեղեցի Երեւանի Արաբկիր թաղամասում,
Եկեղեցի Բերդ քաղաքում,
Եկեղեցի Սեւան քաղաքում,
Սեւանի թերակղզու վանական համալիրի բարեկարգում,
Սեւանի Վազգենյան դպրանոցի հին մասնաշենքի հիմնանորոգում,

Սեւանի Վազգենյան դպրանոցի տարածքի ցանկապատում,
Հառիճավանքի դպրատան վերանորոգում,
Հաղարծին վանական համալիրի վերակառուցում,
Գյումրու Հայորդյաց տուն,
Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տարածքում,
«Ս. Ներսես Մեծ» բժշկական կենտրոն,
Մայր Աթոռի ներտարածքային էլ. մատակարարում,
Մայր Աթոռի ավտոտնտեսություն, միաբանական շենքերի եւ կաթսայատան տարածքի բարեկարգում,
Ս. Հռիփսիմե վանական համալիրի միաբանական շենքի նորոգում:

**Գ/ Սկսած շինարարական աշխատանքներ**

Հաղարծին վանական համալիրի վերականգնում (II փուլ) եւ վանատան կառուցում,
«Վաչե եւ Թամար Մանուկյաններ» մատենադարան,
Հին Վեհարանի վերակառուցում,
Գանձատան մուտքի բարեկարգում,
Միաբանական շենքը Վանատանը կապող սրահ,
Դիվանատան տարածքի բարեկարգում,
Խրիմյան թանգարանին կից մուտքի իրականացում:

**Դ/ Ավարտված շինարարական աշխատանքներ**

Մայր Աթոռի տպարանի շենքի հիմնանորոգում,
Մայր Աթոռի միաբանական «Ա» եւ «Բ» մասնաշենքեր,
Մայր Աթոռի ավտոտնտեսություն եւ պահեստներ,
Էջմիածնի Վ. Կոստանյան փողոցի նախկին մանկապարտեզի շենքի վերակառուցում,
Էջմիածնի Հայորդյաց տան հիմնանորոգում,
Խոր Վիրապ վանքի վանահոր կացարանի նորոգում,
Վանաձորի Հայորդյաց տուն,
Ծաղկաձորի հանգստյան տան ջեռուցման համակարգ,
Երեւանի Ամիրյան փողոցի գրատան նորոգում,
Սեւանի Վազգենյան դպրանոցի ջեռուցման համակարգի վերանորոգում,
Մայր Աթոռի արտաքին էլեկտրամատակարարում,
Միաբանական շենքի հեռուստատեսության եւ հեռախոսացանցերի մոնտաժում,
Մայր Աթոռի տարածքում գտնվող աստղադիտարանի շենքի քանդում,
Մայր Աթոռի տարածքի ասֆալտապատում,
Մայր Աթոռի տարածքում օժանդակ կառույցների քանդում,
Մայր Աթոռի հեռախոսաֆիկացում,
Մայր Աթոռի շինություններում անհատական ջերմային հանգույցների տեղադրում,
Ս. Գրիգոր Լուսավորչի Աջի քարակերտ նմանակի տեղադրում Էջմիածին քաղաքի մուտքին հարող տարածքում,
Գանձատան մուտքի բարեկարգում:

## ը) ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տեղեկատվական համակարգի տնօրենն է Արժանապատիվ Տ. Վահրամ քահանա Մելիքյանը: 2009 թ. տեղեկատվական համակարգի աշխատակիցների ջանքերով կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Հաղորդագրություն – 232 հատ,
2. Թեմական հաղորդագրություն (վերախմբագրված) – 60 հատ,
3. Մամուլի տեսություն – 239 հատ,
4. «Ավետիս» պատանեկան հաղորդում /Հանրային Ռադիո/ - 49 հաղորդում:

Տաղավար տոներին տեղեկատվական համակարգը ապահովել է եկեղեցականների մասնակցություն՝ լուսաբանող հեռուստա և ռադիո հաղորդումներին: Կազմակերպվել են իրադարձային լուսաբանումներ հեռուստաընկերությունների և այլ ԶԼՄ-ների կողմից՝ եկեղեցիների, հիմնարկեքների, օծումների, զանազան հանդիսությունների և այլ միջոցառումների առիթով: Արխիվացվել են ստացվող թերթերում հրապարակված կրոնական նյութերը: Քննության են առնվել մի շարք հեռուստաընկերությունների և ստուդիաների կողմից ներկայացված սցենարներ և նախագծեր, կազմվել մասնագիտական կարծիքներ և ապահովվել համապատասխան խորհրդատվություն այդ ծրագրերի իրականացման ընթացքում:

## թ) ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Քրեակատարողական հիմնարկների հոգևոր ծառայության պատասխանատուն է Բարեշնորհ Արամ սարկավագ Սիմոնյանը: 2009 թ. հոգևորականների կողմից պարբերաբար այցելություններ են կատարվել քրեակատարողական հիմնարկներ՝ դատապարտյալների հավատքը զորացնելու և ազատազրկվածներին Սուրբ Գիրքն ուսուցանելու համար: Աստվածաշնչյան ընկերության հետ համագործակցության արդյունքում շարունակական պիտի լինի Աստվածաշունչ մատյանների և Նոր Կտակարանների տրամադրումը բանտարկյալներին: Տարվա ընթացքում պարբերաբար մատուցվել է Սուրբ Պատարագ Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում: Մայր Աթոռի միաբանների և բարձրաստիճան հոգևոր այրերի ձեռամբ Պատարագներ են մատուցվել Տաղավար տոներին: Սուրբ Ծննդյան տոնին կատարվել են Ջրօրհնյաց արարողություններ, բանտարկյալների մկրտություններ, Հայորդյաց տան սաների մասնակցությամբ կազմակերպվել են տոնական միջոցառումներ՝ նվիրված Սուրբ Աստվածածնի Ավետման տոնին, Խաչքարերի օրհնության կարգեր են կատարվել «Սևան» և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկներում: «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում տեղի է ունեցել Ս. Գևորգ մատուռի բացման և օծման արարողությունը՝ ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Գերշ. Սեպուհ եպս. Չուլջյանի, կատարվել մատուռի շինարար բանտարկյալների մկրտության արարողությունը:

Նոյեմբեր ամսին Հայաստան է ժամանել Ռուս Ուղղափառ Եկեղեցու և Բանտային ծառայության միջազգային կազմակերպության ներկայացուցիչ Քահանա Ալեքսանդր Դոր-

բաղեր` ծանոթանալու մեր քրեակատարողական հիմնարկներում տարվող հոգևոր ծառայության հետ: Այցի արդյունքում ձևավորվել է երկկողմանի սերտ համագործակցություն:

## Ժ) ՀՀ ԶՈՒ ՀՈԳԵՒՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդն է Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը: ՀՀ Զինված ուժերում իրենց ծառայությունն են բերում 38 սպասավորներ` 1 աբեղա, 8 քահանա և 29 սարկավագ, որոնցից երեք քահանա և երկու սարկավագ ԶՈՒ-ում նշանակված են մշտական ծառայության:

2009 թ. տարբեր զորամասերում եկեղեցական տոների առիթով կատարվել են միջոցառումներ: Բանակի օրվա կապակցությամբ բոլոր զորամասերում կատարվել են տոնական միջոցառումներ, որին մասնակցել են տվյալ զորամասի հոգևորականները, իսկ բանակի բարձրաստիճան սպայական կազմը, ընկալյալ ավանդույթի համաձայն, մասնակցել է Մայր Աթոռում մատուցվող Սրբազան Պատարագին:

Ավագ Հինգշաբթի օրը Մայր Աթոռում Ոտնլվայի արարողությանը մասնակցել են նաև Հայոց բանակի զինվորները: ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդը մասնակցել է Պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված կարևոր միջոցառումներին, այցելություններ կատարել Մոնթե Մելքոնյանի անվան վարժարան, Հայոց բանակի զորամասեր, պարբերաբար հանդիպումներ ունեցել ՊՆ վարչության պետերի, ԱՀՏԱ վարչության պետի մոտ այցելած զորամասերի հրամանատարական կազմի աշխատակիցների հետ, ինչպես նաև հոգևոր հանդիպումների նպատակով շարունակական այցելություն ունեցել Ներքին գործերի հատուկ օբյեկտների պահպանության զորամաս: Պատրաստվել է ՀՀ պաշտպանության նախարարության և Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր սպասավորների կողմից իրականացվող 2009 թ. համատեղ միջոցառումների պլան:

Մայիսի 28-ին ՀՀ ԶՈՒ առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը Անգլիայում մասնակցել է բանակի քրիստոնեական ընկերությունների միության համաեվրոպական հերթական կոնֆերանսին:

Նոյեմբեր 2-6-ը հայ-հունական համատեղ միջոցառումների շրջանակներում Հայաստան է ժամանել Հունաստանի Հանրապետության ԶՈւ հոգևոր առաջնորդ Տ. Գեորգիոս Ապոստոլակիդիսը` մասնակցելու ՀՀ ԶՈւ հոգևոր սպասավորների ամենկան ժողովին:

Արմաղան լեռան վրա գտնվող նորաօծ Ս. Հարություն եկեղեցում Վրթանես Սրբազանի ձեռամբ և մասնակցությամբ այլ հոգևորականների կատարվել է Քարվաճառի զորամասի սպաների, Սևանի ոստիկանության կայազորի սպաների և նրանց ընտանիքների մկրտության արարողությունը` թվով 37 հոգի: Կատարվել է Քանաքեռի զորամասի նորակառույց Ս. Կարապետ մատուռի օծման և օրհնության կարգը, որին մասնակցել են Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը` ուղեկցությամբ բարձրաստիճան սպաների:

# ԺԲ) ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

## Բաժնի տնօրենի գրասենյակ

2009 թ. ընթացքում Մայր Աթոռի տնտեսական բաժինը վերակազմավորվեց իր ստորաբաժանումներով և վերանվանվեց Վարչատնտեսական: Բաժնի տնօրենն է Հոգեշնորհ Տ. Մուշեղ արղ. Բաբայանը:

Տարվա ընթացքում վարչատնտեսական բաժնի կողմից պարբերաբար կատարվել են վերահսկումներ, Բարեգործական ճաշարաններում իրականացվել են ստուգումներ: Աշխատանքներ են տարվել Մայր Աթոռում փոստային առաքումների գրասենյակ բացելու ուղղությամբ, ինչպես նաև այլընտրանքային էներգիայի օգտագործման միջոցով Մայր Աթոռի լուսավորության ապահովման ուղղությամբ, «Աքվա Ստանդարտ» ընկերության տնօրենի հետ քննարկվել է Մայր Աթոռի տարածքի ջրի զտման հարցը:

Վարչատնտեսական բաժինը տարվա ընթացքում զբաղվել է նաև Մայր Աթոռի և Էջմիածնի Հայորդյաց տան ջրամատակարարման խնդիրներով: Իրականացվել են նաև շինարարական և տեխնիկական ընթացիկ աշխատանքներ:

Բաժնի կազմի մեջ են մտնում բակային տնտեսությունը, մատակարարման բաժինը, մոմաձուլարանը, իրավաբանական բաժինը, Մայր Աթոռի լվացքատունը, «Վանք» ՓԲԸ-ն, բարեգործական ճաշարանները, Մայր Աթոռի սեղանատները, տպարանը, պահեստները, պահակային ծառայությունը, ավտոտնտեսությունը, գրատների համակարգը և ինժեներատեխնիկական սպասարկման բաժինը: Վերոնշյալ բոլոր բաժինները տարվա ընթացքում բարեհաջող կերպով կատարել են իրենց աշխատանքները՝ ի նպաստ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

## Իրավաբանական ծառայություն

2009 թ. ընթացքում իրավաբանական բաժնի կողմից ներկայացվել են համապատասխան հայցադիմումներ՝ հօգուտ Մայր Աթոռի գումարների բռնագանձումից, Եկեղեցուն պատկանող տարածքներն ազատելու, որոշ գործարքներ անվավեր համարելու և գույքի նկատմամբ Եկեղեցու իրավունքները ճանաչելու պահանջների վերաբերյալ: Ծառայությունում տարբեր կառույցներից ստացված գրությունների, ինչպես նաև Մեր կողմից տրված հանձնարարականների հիման վրա կարգավորման ենթակա տարբեր հարցերի վերաբերյալ կազմվել են զեկուցագրեր և տեղեկանքներ, տրվել համապատասխան եզրակացություններ, ներկայացվել առաջարկություններ և կարծիքներ, պատրաստվել նամակների նախագծեր: Ըստ անհրաժեշտության կազմվել են որոշումների, կանոնադրությունների, հրամանների, լիազորագրերի նախագծեր: Անշարժ գույքի հետ կապված գործարքներ կնքելու նպատակով նախապատրաստվել են համապատասխան փաթեթներ, որոնք սահմանված կարգով ներկայացվել են նոտարական վավերացման և պետական գրանցման:

Եկեղեցուն առնչվող տարբեր ոլորտներում առաջացած խնդիրների կարգավորման նպատակով պատրաստվել են նամակների եւ գրությունների նախագծեր, իսկ դրանք առաքվելուց հետո ծառայությունը հետամուտ է եղել դրանցում իր կողմից բարձրացված խնդիրների լուծմանը՝ ընթացքի մասին պարբերաբար զեկուցելով Մեզ:

Տարվա ընթացքում իրավաբանական ծառայությունն օժանդակություն է ցուցաբերել Մայր Աթոռի ստորաբաժանումների կառույցներին՝ հրամանների, նամակների եւ պայմանագրերի կազմման աշխատանքներում: Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման կամ ապրանքների ձեռքբերման նպատակով կազմվել են հարյուրից ավելի քաղաքացիա-իրավական պայմանագրեր եւ համաձայնագրեր: Ծառայության կատարած դիտողությունները, առաջարկություններն ու նկատառումները քննարկվելուց ու դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելուց հետո ընթացք է տրվել նաեւ այլ կառույցներից ներկայացված բազմաթիվ քաղաքացիա-իրավական պայմանագրերի ու համաձայնագրերի:

## ԺԳ. «ՇՈՂԱԿԱԹ» ՀԵՌՈՒՍՏԱՐՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Շողակաթ» հեռուստաընկերությունը 2009 թ. պատրաստել եւ հեռարձակել է մոտ 164 ժամ ընդհանուր տեւողությամբ հեռուստաշարեր, հաղորդումներ եւ տեսաֆիլմեր, որոնցից.

քարոզչական եւ տեղեկատվական - 16 հեռուստաշարք,

տեղեկատվական, ճանաչողական - 43 հաղորդում եւ ֆիլմ,

կրթամշակութային - 10 հեռուստաշարք,

կրթա-մշակութային, երաժշտական եւ ժամանցային - 41 հաղորդում:

Հանրային հեռուստատեսության հետ պայմանավորվածության համաձայն, «Շողակաթ» հեռուստաընկերությունն ամեն շաբաթ (բացառությամբ կիրակի օրերի), մեկ ժամ տեւողությամբ սեփական արտադրության հաղորդումներ է տրամադրել «Հ1» արբանյակային ալիքին: Դրանք եթեր են հեռարձակվել «Շողակաթ» հ/ը գլխագրով եւ օրվա ընթացքում ցուցադրվել են երկու անգամ:

2009 թ. ընթացքում պատրաստվել եւ Հայաստանի Հանրային հեռուստատեսության «Հայլուր» լրատվական ծրագրին է տրամադրվել Հայ Առաքելական Եկեղեցու գործունեությունը լուսաբանող 38 ռեպորտաժ:

Մասնակցելով տարվա ընթացքում կազմակերպված բազմաբնույթ փառատոների՝ հեռուստաընկերությունը ստացել է շնորհակալագրեր եւ մրցանակներ: 2009-ի տարեսկզբին «Արմենիա նաու» էլեկտրոնային պարբերականի հետ իրականացվող «Հայ Ձմեռ պապ» ծրագրի շնորհիվ հեռուստադիտողների կողմից զգալի օգնություն է տրամադրվել երկու տասնյակից ավելի անապահով ընտանիքների:

2009 թ. Հանրապետության տարածքում գործող բոլոր հեռուստաընկերություններին արխիվային տեսանյութեր են տրամադրվել Վազգեն Ա Կաթողիկոսի 100-ամյակին, Մյուռոնօրհնության, եկեղեցական տոները լուսաբանող տեսանյութերի պատրաստման համար:

2009 թ. ընթացքում «Շողակաթ» հ/ը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայկական Կլոր սեղան բարեգործական հիմնադրամի պատվերով ադրբեջանական «Ինտերն-

յուս» կազմակերպության հետ համատեղ նկարահանել է երկու տեսաֆիլմ՝ տարածաշրջանում խաղաղության հաստատմանը նպաստող ծրագրի շրջանակներում:

ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակի (ՄԱԶԾ) պատվերով պատրաստվել են 7 տեսաֆիլմեր՝ «Համայնքների կարիքների դիտարկումը մշակույթի պրիզմայով» ընդհանուր վերնագրով:

«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության պատվերով պատրաստվել են երկու տեսաֆիլմ՝ հաշմանդամների հիմնախնդիրների վերաբերյալ:

## ԺԴ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2009 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շարունակել է համագործակցությունը հասարակական եւ մշակութային կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների հետ: Համագործակցության արդյունքում կազմակերպությունների կողմից հատկացված հումանիտար օգնության շնորհիվ սոցիալական բարեգործական ծրագրեր են իրականացվել Հայ Եկեղեցու հայաստանյան թեմերի քաղաքներում եւ գյուղերում:

IRD, UMCOR, World Vision, ARDA, ԵՀԽ Կյոր սեղան եւ այլ բարեգործական կազմակերպությունների հետ համատեղ սոցիալական օգնություն է ցուցաբերվել առավել կարիքավոր ընտանիքներին, հաշմանդամ, միակողմանի եւ երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, միայնակ ծերերին: Հասարակական եւ բարեգործական կազմակերպությունների կողմից տրամադրվել են սնունդ, տնտեսական, գրենական եւ հիգիենիկ պարագաներ: Ծրագրերի շրջանակներում կազմակերպվել են ուսուցողական-դաստիարակչական միջոցառումներ եւ հանդիպումներ հասարակական եւ մշակութային գործիչների հետ:

Նյութական օգնությունից եւ աջակցությունից զատ, հոգեւոր եւ նյութական օգնություն է ցուցաբերվել նաեւ զանազան տեղական հասարակական կազմակերպություններին եւ միություններին:

Մայր Աթոռի կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի մեջ են մտնում նաեւ բարեգործական ճաշարանները: 2009 թ. ընթացքում ճաշարաններում սնվողների միջին թիվը կազմել է 194, որոնք տվյալ համայնքի բնակիչներն են: Յուրաքանչյուր տասն օրը մեկ Մայր Աթոռ է ներկայացվել սննդամթերքի շարժի վերաբերյալ հաշվետվություն, իսկ յուրաքանչյուր ամիս՝ սնվողների հաճախումների վերաբերյալ հաշվետվություն:

Ճաշարանի գույքը, անձնակազմի անձնական հիգիենան, աշխատանքի ներկայանալու ժամը, ճաշերի որակը եւ սնվողներին ժամանակին ու պատշաճ կերպով սպասարկելը գտնվում է տնօրենների ամենօրյա ուշադրության կենտրոնում: